



891.99
C1-63







Ա. Հ. ՊԱՐԱԳԱՎԻ ՊՐՈԼԵՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻՈ.

ՊՐՈՎԵՏԱՄՆԵՐ ԽՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՑԵՐ!

ԳՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

263

94.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1928 թ.
ԱՏԵՓԱՆԱԿԵՐՑ

891.99
Դ-63



ՀՐԱՏ. ԻՆՔ. ԼԵՂ. ԴԱՐԱՄԱՆԴ ՊՐՈԼԵՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱՆ

391.99

4-63

ԳՐ. ՆԵՐՍԻԱՅԱՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!


ԲԱՆԱՍՏԵՂԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

94




卷之三

1928 p.
Ամերիկանակեր



~~Թհոք~~




~~58+2~~

Ձ Բ.


ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Մրանով Խնմակար Լեռնային Պարաբաղի պրոլետարողների ասսոցիացիան նիմք ե' դնում իր հրատարակություններին։ Առաջին ներքին մենք հրատարակելու յենք ներսիսյանի գրվածքները, վորոնցից նետ առիթ ենք ունենալու հրատարակելու յեվ մնացած ընկերներին։ Հրատարակությունների ընթացքում նկատվող բերությունների մասին խնդրում ենք իրազեկ դարձնեք հրատարակչությանս, վորն ամեն մի դիտողություն հաշվի կառնե ապագայուս մեծ ուրախությամբ։

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՅԵՐԳԵՐ



* * *

Յես ձեզ ասում եմ,—անքաղ մեռելի
վողբը կհնչէ մուրերում խաղաղ,
զիշերներն անեն մարդիկ կըշին
անհույս վետահար...

Կյանքը տանջաղի դժողք կդառնա՝
ամեն տեղ արցունիք, հալածանիք, կսկիծ,
արյուն, կոտորած...թշվառ մայրերի
անլուռ վողբերից,

անզգա յերկրի բռնուրյան նլու
մարդը խենքացած, ցավից ժանքանար,
անպարտ զայրույրով կենե փերելու
կապանի ու տղրա:

Յեզ վրեժիսնդիր նա ամեն կամքով
կփերէ կուռքը պաօտած պապերի,--
խորտակած ննի վլատակներում
նոր կյանի կսեղծե...

Յես մեզ ասում եմ,—այդ արյան անափ
սեվ բաղանիքից մարդը կհանեն
վախճանի մարտի, յերկերն երջանիկ
կժպտա նորից...

1917 թիւ.

Պետերբուրգ.

* * *

Գալիս ենք ահա՝ մեր նախնիքների
սել հայրենիքի մուը խալարներում
Եոր լուս վառելու... Գալիս ենք ահա,
վոր մեր պապերի պատաժ կուռենի
բազինը փլենք մեր փառքի համար...
Մենք ենք հանճարը մեր ժամանակի,
բարգմանը հզոր անքիվ մուրների
կուռ հարվածներից լսվող ձայների...
Մենք հայելին ենք զործարաններով,
մենանաներով հարուս հաղաքի...
Ե՞լ, դուք նախնական կյանքը դրվասող
զեղչուկ յերգիշներ, հեռացեք փուրով...
Ճանապարհ հարթեք մեր յերի առաջ...
Մենք ենք օչակը ողբեկառներին
հարող կարապի... Ձեր սայլակներով,
խղնուկ յեզներով, հոգնած ուղտերի
հոգնած կարվանով հեռացեք փուրով...
Վաղուց եք յերգել, ինչ պիտ յերգելիք,
ճանապարհ հարթեք, այդ մենք ենք զալիս...

Ճաւակ
1918 թ.

ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Այս մեր նոր կյանքի նոր արևները
յերկնող մշուշում՝ անհուն զիշերը
անթիվ դարերի թույնով ծանրացած,
իր դաժան, լպիրշ, մահասվյուռ շնչով
լույսերն և մարտում... Դուք խավարացան
մի հրդեհ վառեք, սիրոս ձեզ պատրույդ
այդ մեծ հրդեհին...

*

Սև, մութ բանտերի մղձավանջներում
թոկերից կախված մեր ընկերների
տնքոցն և լավում. դահճապետների
սրերին փարպած յերիկ անվեհեր
կովող մարտիկն և այսօր մունջ մեռնում,—
գուք նոր վրեժի ցասումով անսանձ
հոգիս հրդեհեք խավարում մնջած...,

*

Գործարաններում պայթած կաթսայից
մեռած բանվարի ուղեղն և վառվում.
և գործատերը բորենու նման
իր ձեռափայտով վառվող ուղեղում
հետքերն և փնարում իր մեքենայի...
Դժողք և զաղիր... Հրդեհեք շուտով
և այս դժողքը, միաքան ձեզ պատրույդ
այդ մեծ հրդեհին...

*

Լայն վողոցներում, ուր պալատներն են
հպարտ ճակատով ցցված կողք-կողքի,

ուր վոր «որենք»-ի տներն են զինված
ալինների տակ շրջող պահակով...
Լայն փողոցներում ձեր ընկերների
քույրերն են ծախվում «որենքին», փողին...
Այրեք փողոցը... Որենքներն այրեք
լայն փողոցների... Ինքս ձեզ պատրույգ
այդ մեծ հրդեհին...

*

Հաղթ տաճարների գոներից ահա
փողոցն և քշվում մուրացիկների
շարանը յերկար... «Աղոթողներին»
հաճո չե տեսնել ցնցոտի, արցունք...
«Հավիտենական սիրո քարոզիչ»
քահանան լպիրշ ժպիտը դեմքին
թավշապատ կանանց աղոթքն և միայն
հաճույքով լսում... «Աստվածն» ել այստեղ
փողով և ծախվում... Պետք չեն մեզ աստված
և վոչ տաճարներ... Վառեցեք շուտով,
այրեք տաճարը, այրեք աստծուն...
ինքս ձեզ պատրույգ այդ մեծ հրդեհին...

1918 թ.

Թիֆլիս

ԹԵ ՎՈՐ ԻՆՉ ՆՄԱՆ ՔԱՂՑԱԾ ԼԻՆԵՑԻՔ...

Խավարի գրկից՝ դուք յելաք մի որ,
ճանապարհ ընկաք խրոխտ քայլերով
գեսպի առավոտ.

Սև տարիների խենթ վորոնումի
անջինջ կնիքը կնճռուս դեմքներիդ,
ծարավ շների վոհմակի նման
դուք հասաք այստեղ...

Յեղ ջուր եք ուզում քամել քարերից,
դուք հաց եք հայցում անզգա ժայռից,
ջարդված մուրացկի վոտներով նկուն
կանգնել եք այստեղ...

Զեր բազուկներն եք պարզում անցնողին,
արտասպում հուզված, լալիս՝ տրտմաձայն.
բայց յիս՝ ձեր վորդին—ձեզ պես քաղցածին
ել չեմ հավատում...

Թե վոր ինձ նման քաղցած լինեյիք,
դուք վողջ աշխարհը մեկին կուտեյիք
և վոշ թե այսպիս ձեր վզին իջնող
սրերից կախված միշտ քարշ կդայիք
մահվան այլանդակ ստվերի նման...

*

Խեխտող արցունքից մեռնող ծերունու
տրտունջով անզոր
դուք գեռ սողում եք այս յերկրի վրա
և կարծում եք թե նա՝ այն ցնցոտի
աստվածը հրեշ
իր բարձունքների ահեղ գահույքից
կփութա իջնել ձեզ ձեր տանջանքից
փրկելու մի որ...

Զերմ աղոթքների բույրով հոգեթով
արբած՝ չոքել եք այս ճամբի վրա.
զեփյուռից քնքույշ, մահու չափ տրտում
ձեր մրմունջներն են յերկինք բարձրանում...
Յես չեմ հավատում այդ աղոթքներին...
Թե վոր ինձ նման քաղցած լինեյիք,
դուք վողջ աշխարհն անգուստ զայրույթի
բոցերով անմար մեկեն կայրեյիք
և վոչ թե այսպես սողունի նման
ձեր նման մարդկանց վոաքի տակ ընկած
պիտի մեռնեյիք—գալիք փրկության
գովքը յերգեյիք:

*

Յես ձեր պոեան եմ,
տնապատների մեռած ավազը
հուզող մի խորշակ,—
յես մըրկածին մըրիկ եմ անսանձ,
յերբ ևս շունչ առա, դուք ընկաք պարտված...
Այժմ լալիս եք... Զեզ չեմ հավատում...
Թե վոր ինձ նման քաղցած լինեյիք,
ուռած ծովի պես կատաղի շնչով
ձեր հողթ հոսանքն ամբողջ աշխարհը
պիտի հեղեղեր
և վոչ թե այսպես դռնեղուռ ընկած
հաղթ դղիակների պարիսապների տակ
քաղցած ու ծարագ դեռ մինչև այսոր
պիտի դողայիք...

ՔԱՂԱՔՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ

Այս գեղեցկանիտու, շքեղ քաղաքում,
 թվում և, մի դար վոչինչ չկերած
 ամբողջ աշխարհը՝ և արևմուտքը,
 և արեւելքը, բներից բնեռ
 վողջ յերկրագունդը՝ լափել յանկացող
 մի դազան եմ յես: Յեկ յերբ հոյակապ,
 շքեղ, լուսառատ ձեր պալատների
 մեծ գահիճներում որվա խնջույքից
 արբած, հազեցած գաշնամուրի մոտ
 գիրգ բազմոցներին մեղկորեն կոթնած
 կուշա ընթրիքների, յերգի և պարի,
 տարփուհիների գովքն եք ներբողում,—
 յես մայթի վրա սանձված զայրույթիս
 խեխտված հուզմունքով տնիծում եմ լուռ
 իմ ապրած որը, վոր զրկանք եր սոսկ
 մի անանց կոշմար, ուտելու կարու...

*

Յեկ այստեղ կանգնած, թվում և, մի դար
 վոչ մի բառ չասած մի խենթ համը եմ յես:
 Յերբ փողոցներում ձեր բազմահազար
 կուշա սնվածներիդ շարքերն են անցնում
 յերգով ու բույրով, յես մայթի վրա
 կուր հուսացողի ցասկոտ տենչանքով՝
 համառ հայացքս ուղղած խիտ առ խիտ
 անցնող ժխորիդ՝ վորոնում եմ լուռ
 հազարներիդ մեջ ինձ պես դեթ մեկին...
 Ա՛, նրանք շատ են՝ անթիվ, անհամար,
 բայց չկան այստեղ... Դուք յերկնակարկու
 ձեր դղիակների լքտի որենքով,

կարիքի, քաղցի հզոր մտրակով
 լայն փողոցներից քշել եք նրանց,
 վոր շքեղ յերթը փափկասունների
 կանգ չառնե թեկուզ մի վայրկյանի չափ,
 շարժվող կմաղքներ տեսնելով ճամբին:
 Դուք վարպետորեն քշել եք նրանց,
 վոր բիրտ ցնցոտին չքավի հանկարծ
 ձեր շքեղ կանանց նուրբ դգեստներին,
 վոր քաղցից անզոր մեռնողի լայը
 չվրդովե ձեր տարփուհիների
 ժպիտը ծախված... նրանք փակված են
 անլույս ու խոնավ նկուղների մեջ.
 Գործարաններում, հանքերի խորքում
 հնոցների մոտ, ծուխ ու մուխի մեջ
 յուղոս լաթի պես այրվում են նրանք
 անանց կիրճերի վողորկ շուրթերին,
 կարծր լեռների կրծքերը մտած
 քլունգով, բահով, թանչող կաթսայի
 ույժով ու թափով ճամբա յեն ճեղքում
 ձեր յելքի համար. քարից ու հողից
 կյանքեր են քամում, կյանքերը մաշում
 հուր վայելքների, այրող հաճույքի
 աղբյուրը դարբնում ձեր փառքի համար...
 Յերբ ծաղկափթիթ գեղ պարտեզներում
 սիզաճեմ վազքով ընթացող շան հետ
 արծաթ ծիծաղի զուսպ քրքիջներով
 թարմ շուշանների բույրն եք դուք շնչում,
 նրանք—հնոցի տոթից հրկիզված—
 ձուլված կապարի փոշին են ծծում,
 յերբ ձեր հոյակապ պալատների մեջ
 զիրգ բազմոցներին ծուլորեն կոթնած
 բիրտ վայելքների վայրագ^աճեներն եք
 անվերջ յերազում... Ցուրտ նկուղների
 խավարի զըկում նրանք լոկ հացի
 կարուտն են միայն անվերջ վորոնում...

*

Պալատների դեմ այս մայթի վրա,
 թվում ե, մի դար իմ տեղում մեխված
 անքուն եմ ապրել... Յերբ թատրոններից
 շքեղ կառքերով անուշ կըքերի
 քաղցր հուզմունքով, պարարտամարմին
 դուք ասպետներդ, մեր այս որերի
 տարափուհիների ազգբերը գրկած
 տուն եք սլանում, յերբ վոր ձեր առաջ
 թագչով, մետաքսով փարթամ զարդարված
 ննջարանների՝ դռներն են բացվում, —
 ցասկոտ մի վշտով զիտում եմ յես ձեղ,
 ձեր յերթն անիծում, ձեր յերթն անզգա... .

*

Թվում ե, մի դար սպասել եմ յես,
 վոր այսոր միայն յուր ջարդված զանգը
 զայրույթով ճանկած մի գամբոի նման
 կատաղի ոռնում... Յուր խոցված թաթի
 վերքերը լիզող աւյոծի նման
 անլուռ վորոտամ... Թվում ե, մի դար
 սպասել եմ յես, վոր այսոր միայն
 յես խարույկ վառեմ մայթերի վրա
 ընկածների մեջ... Խարույկ... Դարերի
 Անեծքից վառմծ... Հավերժական հուր,
 վոր վողջ յերկիրը հրդեհե, լավե,
 դարձնե մի գեղ վայր, ուր պալատներում
 մինչև առավոտ գիրգ բազմոցներում
 յերգչուհիների ներկված շուրթերից
 համբույր չեն քաղի տեղերն աշխարհին...
 Ուր յերբեք, յերբեք անձրեսին, ցեխին
 մարդիկ չեն մեռնի մայթերի վրա... .

*

Թվում ե, մի դար սպասել եմ յես,

վոր այսոր միայն ապրած որերիս
 արհավիքների, գշտի, զրկանքի
 կուտակված թույնի մաղձով վորոտամ...
 — Ե՞լ, զուք հանքերում, զործարաններում,
 զետնի տակ փորված մութ նկուղներում,
 խարխափումների անծայր ճամբեքում
 ինձ պես դեպերող քաղցած ընկերներ...
 Հանկցեք սիրաս, այրեցեք զուք այն,
 թող պատրույզ զառնամ ձեր կյանքի համառ
 Մարտի խարույկին... Սիրաս հանկցեք,
 թող զոր ձեր վառած հրդեհների մեջ
 կյանքս մոխրանա, թող ձեր հաղթության
 որհներգը յերգեմ, այնպես մահանամ...

1918 թ.

Թիֆլիս

2626


Նոր արշալույսին մեռնող խավարի մշուշների մեջ
ձեզ նման մարդկանց գանգիքն են ջարդված հաղթողի ճամրին,—
դիաթումբերում լողիրչ վայելքի խնդումով անվիրջ
ծափերն են հնչում ձեր գահիների... Սպահանդեսի
վորացողներդ ապստամբության խարույկը վառեք:

956-532
Մեր ընկերներին սուր ավիներին շամփրող գաղանն և
տերը ինչույքիւ Հաղար ինեղճերի արյան շաղախից
հաղթ դդիակներն են ձուլիել վերամբարձ լեռների նման...
Մոռայլ բանտառի մութ նկուղներում խեխտվող, մահամերձ
ուրուականներգ, յելք փշրելու կապանք ու շղթա:

Կախաղանների թոկերից ճոճվող կյանքերի գնով
ամրութիւն եր մի որ. դարավոր շղթան իրնից թոթափել
այժմ խայտառակ սյուների առաջ իր իսկ անկումի—
ձեր սկ պարտության տոնն և նա տոնում... Դուք ըմբոստության
ջառագովներդ նոր առավոտի նոր յերգը յերգեք:

A 66814
Պարարատամարմին մարդ տպրուկների աշխարհն և հզոր
մութ իրճիթներում հանգչող վորբերին նենդությամբ խեխտում,
լուսաղուրկ բանտում խամրող կյանքերի գահիներն այսոր
մեր ընկերների կարմիրն են հագել... Բնանավորներից
հալածվածներդ... Հին կյանքի շքեղ մահերգը յերգեք:

Դործարանների բյուր, յերկնակարկառ աշտարակներից
տքնող բանվորի խեխտող հառաջն և ծխի հետ ժայթում,
քաղցից վոսկրացած անթիվ ձեռների անդուլ շարժումից
վայելքն են քամում անթիվ կյանքերի գահիներն անպարտ...
Բանվոր մարդկության ապստամբության նոր յերգը յերգեք:



ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ

Մահասարծուու պատերի տակ անեղաշուք իմ բանտի
 այն լուսերանգ յերազներին յիս խորթացած ու ոտար,
 սիրտս լցուն այս հոգեմաշ տանջանքներով ցնցոտի
 քեզ եմ հայցում, առավոտյան, յերբ լույսը գա, իմ բանտն իջիր, յեկ այցի:
 Կախաղաններ շարվիշարան, կախաղաններ արնաններկ.
 շղթաներով կաշկանդված և միտքս գերի քո կանչին,
 հրաճերմակ, բոսորափայլ յերազներիս վառ փերի,
 քեզ եմ հայցում, յերբ մութն անցնի, կախաղանիս յեկ այցի:
 Շանթահարե քո արնափառ ճաճանչներով հրագեղ
 աշխարհները մութ և անհույս նկուղների, բանտերի...
 Կուռ բանակիդ զորասյուներն արագընթաց, յերկաթյա
 թող ողակեն և հրդեհեն կախաղանս—սև յերազն իմ. կյանքի...
 Հրդեհներիս մոխիրները հարավ, հյուսիս ցան ու ցիր
 արևելքից մինչ արևմուտք թող փոխարկվեն ծովերի,
 իրարանցման կենսակառույց նոր քայլերգով դու անհաղթ
 առավոտյան բանտս թաղիր ճաճանչներիդ ցնցուղներում դյութական...
 Կախաղանիս սյուների մոտ քաղցրանվագ, հաղթ յերգերիդ կարուով
 հեքս բոնած սպասում եմ զվարթարար քո կանչին.
 և յերազում հրաճերմակ ճաճանչները քո հրդեհած արևի,
 յերբ լույսը գա, խրոխացած իմ բանտն իջիր, յեկ այցի...

ՎՈՃՐԱՊԱՏՈՒՄ

Բոլոր նրանց, ովքեր թնկան մեր ազատության
սուզ-վերջալույսին:

... Եշակը սուլեց... Վիրառվոր գոմեի
ծանր տնեղով փռնչաց կարսան,
կասեա, ոնչասպառ. թնկալ կես նամբին.
Ել չեր հանդզնում բայլ առաջ շարժվել...
Գնացքը կանգնեց...

Յել յերկարապատ պատուհաններից
ապրելու տեսչով այրվող աշխերը
զննեցին նամբան... Ավազների մեջ
իզուր չեր կանգնել դիվային նիշով
ունացող կարսան...

... Բաց դաշտի վրա մահու չափ մռայլ
բանտարկյալների անզեն շարանն է
զյսիկոր մնօսմ... Հրացանների
կորերից բռնած խուժանն է ահա
շուրջն ամբոխված...

... Սել վոնիրների բույնով ծանրացած
ավազների մեջ մռաբերն են լայիս.
մահապարտների սել հոգիվարի
ցավերով նոյն տեսդոս զիւերն է
նեկելում անձայն...

Տխուր նվիպով բանտարկյալների
յերկրորդ շարանն է իր կյանքի վողբում.
նգնում է փորձել իր նույսը վերջին.

ցան-ցիր փախչում և ու ցան-ցիր փռվում
հալածողների նաղրական նամբին...

... Յերրոդ շարանն ել վերահսա մասնվան
խելազար փազի արևոս նեսերով
իր բնկերների նամբան և անցնում,
բաց դաշտի վրա անկենդան պառկաւմ...

... Թիկունեղում բոլած արյուն ու վոճիր,
դեպ փառքն ու պատիվ, դեպ արևով արքած
խելազարների ծափերը նուժկու՝
նաղրական կռվից յես դարձող խիզախ,
անպարտ փաչի պես սել ժանդարմների
շարանն և անցնում...

... Նշակն և սուլում, փախեցած գումչի
ձանը սնենցով ծղրտում հուզված,
կասես, սարսափից ցած և զլորվում
խոր անդունդներում ջարդվելու համեր
սեպ վոճիրների բույնով ծանրացած
անծայր խափառում ոռնացող կարսան...

Մ Ա Ր Շ

Թողած իսով, արոր, վարձած լծկաններ
քաղաք և գալիս աղքատ գյուղացին.
Թողած տուն ու տեղ, զավակներ ու կին
նա քո բանակն և մտնում անարգել...
Անթիվ վուներից բարձրացնել փոշին
սյուների նման կախվիլ և ոդից
ու նեղ և, կարծես, այս անծայր ուղին,
վոր վորոտում և հուժկու քայլերից...

Մեկ, յերկու, հառաջ, Բանվոր Զորավար,
քարշ տուր աշխարհը ու քեզ հետ միշտ տար.
մեկ, յերկու, հառաջ... Խավարն և յերկնում
հուր-հեր արեի շողերն անտրտում:

Սե-մութ կիրճերի վողորկ շուրթերին, || |
ուր մենք հետիվոտ վտխով ենք անցել,
քո հարվածները յերկաթե սալին
լայն ճանապարհ են մեզ համար հարթել...
Այժմ գյուղացին անվախ և քայլում
քեզ հետ ընդառաջ դեպի լույս արփին.
անհույս գիշերը գողում ե, մեռնում,—
նոր ծնվող կյանքն ավետում յերկրին...

Մեկ, յերկու, հառաջ, Բանվոր Զորավար,
դու այս աշխարհում տանջվել ես յերկար,
մեկ, յերկու, հառաջ, յերկիրն ընդարձակ,
պճնել ես, զուգել քայլիր համարձակ:

Տես, այս քաղաքը սոսկ անապատ եր
ու մի տաճար կար կենարոնում ցցված.
այժմ անթիվ են հսկա պալատներ,
դեպ յերկինք կառչող անթիվ դղիակներ.
և քո ընկերը հոգաղուրկ, թշվառ

ահա քեզ նման գործարաններում
քեզ հետ կողք-կողքի զնդանի վրա
ժանու սորկության վախճանն և կոռու...

Մեկ, յերկու, հառաջ, Բանվոր Զորավար,
քո արտասուբքից հողը հաղեցավ,
մեկ, յերկու, հառաջ, հառաջ անդադար,
կեցցե քաղաքը, կորչի անապատ...

Այս սավառնակը, վոր սլանում և
ամպերիցն ել փեր, նա քո կոանի
հարվածն և սալին, վոր մունջ յերկաթին
մրրկի ույժը ներշնչեց այնպես...
Մութ նկուղներում բռնավորներին
զուր ազոթելուց գեղջուկը հոգնեց,
նա՝ շղթայազերծ, տես, բարձունքներում
գեպի աստղերի վոլորոտը սուզվեց...

Մեկ, յերկու, հառաջ, . Բանվոր Զորավար,
այս յերկրի վրա քայլիր համարձակ,
մեկ, յերկու, հառաջ, հառաջ անդադար
կեցցե գեղջուկը, կեցցե սավառնակ...

1919 թ.

Քիֆլս

Մ Ղ Զ Ա Վ Ա Ն Զ

Տեսէլ ե՞ս արդյոք բաղցից մօլեզմած հմէ
նրավառ նինի սոսկալի փայլավար ո՛ւ
աշխերը չուած մայրը յուր փարգուն բար
մորթելիս, տաս'...

Տեսէլ ես արդյոք կրմադարձ ամբողջի տժնդակ մուրի սոսկանների երկար ո՛ւ
դժնդակ մուրի սոսկանների տակ պահպատճեց դիարումքերի այն մահասարսուռ ո՛ւ
դժողովում անափ, սարսուռի թեփով շըզում են անինեց, սեփական օրինում սեփական մարմնի միսն են կրծուռամ...

Տեսէլ ես ասս', Մորթիած մեռելի զանգը կարսայում, որ
կամ քե մօլեզմած, բաղցից ցնորված դիակի նման շըզող մի մարդու սեղանին դրված...

Դու, վոր յերազիդ բասիս գրկի մեջ՝
ո՞ւ պալատներում

զեղեցկուրյունն ես անվերջ յերազում...

Տեսէլ ե՞ս արդյոք զեղեցիկ մանկան մարմինն աղփած յուր յեղբոր նամար...

Գինու փրփուրը նոզիկ ե բովում,
սիրտ բաբախում բոչունի նման.

Պու վերև ես տեսնում, յերջանկուրյունն
լուսնի ուուրերով բամբի զանկանում...

Տեսէլ ե՞ս արդյոք
այնեղ նկուղում խսիրների մեջ
ո՞ւ դուան ժեմմից անվերջ հալածված
մարդ սպիտների դիյերը բաղցած:
Փու պալատները կերտող բանվուն ե
այնեղ խալարում սովոր մահանում...
Դու, վոր ո՞ւ կյանքի

անհոգ խնդուրյամբ յերազ ես՝ շենչում,
դու յել չբացիր անուրջի նման...

Թո՞ղ, վոր սովումի մղանվանջներով
ամբողջ աշխարհի մեկեն օղարքի.

ծիծաղ մի թիր այդ յերկնակարկան
են պալատների պատճառիներից,

դեսպ խավարապատ նկուղները սել...

Ծիծաղ մի թիր'...

Մենք բաղած մարդու վայրագ տենչանենով
ժեզ կխորտակինք պալատիդ նիսքում,

կխոտ նենք զազիր արյունդ յեռուն

այն մեր զսիների ովկյան-արյան հետ...

Յել բ դիակն ել կնետենք դաւըր.—

այնտեղ,—մերուց մոս, այնտեղ՝ մերուց մոս:

Թո՞ղ, վոր բզկտվենք մենք, դու, ամենին

վոր նա՝ ապագան՝ հին յերկրի զանգը

վոտի տակն առած՝ իմ, բ բոլորի

անձայր դամբանում,—մի յերջանկավետ

նոր կյանք ստեղծե:

1921 թ.

Թիֆլիս

Հ Ի Ն Գ

I

... Արցունքե մի ամպ
 կասես թե գիտմամբ
 յեկավ աւ չողեց,
 սառցի հրերով մեր միտքը վառեց...
 Հիմա վիրավոր նա, վոր բյուրավոր
 հույսեր և տածել դեպի նա, նա, նա և նա,—
 մեր հողին
 դալկաղեմ մեզերի նման
 կապարե զանգվածի նման
 մարդկային կրատեր—աչքերից
 հըարուխ-արցունք և ժայթքում
 իմ, ձեր, բոլորի փնջած հույսերը
 վառելու համար... Բայց,
 արցունքե ծովերում,
 արյունի, ճենճերի աշխարհում,
 ուր մեր շատ ու շատ
 վարդ—ընկերներն՝ են մոխրացել այնպես,
 աննկուն ենք մենք
 ու պատրաստ ընդմիշտ
 բոլորի, աշխարհի համար
 վարվող գործմարտում մոխրանալ անդամ...

II

Այն մենք, մենք՝ նետվեցինք
 ողեղեն՝ բանտից դեպի՝ յերկիրը
 վառվով՝ մսեղեն ջահերի նման.
 այդ մենք, մենք փորձեցինք
 մահն ողի մեջ, մահը հրի մեջ...
 Մեր սիրութ լուեց,

միտքը քարացավ...
 Անզոր մահվան դեմ
 այդ մենք փորձեցինք թուիչքը մահվան
 Մեր հոգին մնջեց,
 վոր վաղը նորեն մեր հուր կորովի
 ըմբոստ խոյանքով
 մարդկային մտքի պողպատ թևերին
 թառած մենք ճախրենք, տարերքը պարտենք...
 Մեր վորդին անվախ կթռչի,—
 չի փլչի
 անգամ թնդանոթներից
 մեր նոր ջանքերով կերտված զօրավոր
 սահմանակը մեր:

III

Կոմկում... Մարտունին
 քո քարտուղարդ, ասում են, չկա...
 Բայց կա, անթիվն ե, բանվորն ե,
 գյուղացին
 քարտուղարը մեր:
 Նա կա, չի մեռնի
 անթիվի գործը,
 վորի համար ե ածխածել այնպես
 Մարտունին՝ քարտուղարը մեր:

IV

Զեկա,
 ասում են, ասում են
 Մոգիլևսկին այլմա չկա...
 Ասում են... Բայց կա:
 Չկա հուր, կրակներ չկան
 մեր սիրած մարդու գործերը վառող...
 Թէ մենք անզոր ենք հրերի դիմաց
 ողում, բարձունքում,—
 մահն ել անզոր ե
 մարդկային մտքի վեհ ուղիների

Ժապավեհնները խլելու յերկրից...
 Չիկա, նաև առաջ առաջ առաջ առաջ
 նա կա, կմնա, պատրաստ և ճամբան. նա կա, յերք կա,
 կընթանան ընդգծած ուղղվ:

V

Բուրժուա, հրճված ես...
 Ուրախ ես, հա,
 Գնորդը չկան
 նա կա! Սարսուա հրճվանքիդ համար.
 կոմոմոմոլը, տես, որտանս արծվի նման
 հսկում և միշտ քեզ,
 փորելով գամբան
 քո չար հրճվանքի, խնդումի համար...
 Բուրժուա, կարծում ես Գնորդը չկա...
 նա կա,
 հրճվանքիդ նա վախճան
 քո մահն եր նյութում յուր կյանքի գնով...
 Մահդ մոտալուտ բյուր Գնորդների
 սերունդն և հիմա կոանում մուրճով:

VI

Խղճուկ և կշանքը, յերք թոփչք չունի,
 յերք հանդինության թովշանքը չունի...
 Շպիլը, Ապրում և նա,
 գործարանների հսկա աղմուկում
 նա նոր թոփչք և պողպատից ձուլում...
 Ել չի այրվելու ողանավը մեր
 յերք Սագարաձեն՝ գութանի. վորդին
 թուշել իմանա,
 յերք Սագարաձեն՝ գութանի վորդին
 հուր տարերքներն իշխել իմանա...

VII

Վորպես թե վառվող մսեղին ջահեր

մեր շքեղ զործի արնավառ այգին
սկային բանտից դեպ ցած նետվեցին
նա, նա, նա, նա և նա:

Բուրժուա սարսափիր:

Մարդկային կամքի տիտաններ եյին
նրանց հրերով այն քո աշխարհը պիտի հրդեհվե...
Այդ մենք, մենք փորձեցինք թոփչքը մահվան,
վորպեսզի վաղը մի նոր թոփչքով
մենք տռաջ թոչենք տարերքը պարտած...
Մենք պիտի ձգտենք և պիտի հասնենք
այն շքեղ սրին,
յերբ մեր ոյուղացին՝ զութանի վորդին՝
բյուր բանվորների հզոր բանակում
տարերքը պարտած թոչել կիմանտ...
Մենք պիտի ձգտենք և պիտի հասնենք...
Բուրժուա սարսափիր:

1925 թ.

Սուխում

* * *

Զկար մի հյուզ, վոր չունենար գեթ մի դապաշ, մի մեռել
լեռնակղզու մոխիբներում դոհարերած հրերին...

Զկար մի հյուզ, վոր չարտասվեր հուր զարույթից մահաթույն
արյունիվա մեր լեռների ծաղկափթիթ լանջերին...

Զկար մի հյուզ, վոր չերազեր իրրի վախճան առնջանքի
խաղաղության անազգական, անհիշաշար գերեզմանն...

Զկար մի հյուզ այն որերին, վոր չսարսեր իր կյանքից
շիրմի շեմքին, վոր չերազեր խենթ բերկանքին իր մահվան,
ունայնության սրտամուրոք ըղձացումներ խենթ ու սին,

ամենուրեք զշտամշուշ արցունքների այրով ծով,

ձենճերների մխացումի մի հեղձուցիչ տարտարոս,

դիամբուրգ եր մեր աշխարհն արյունիվա ու անլույս...

Ապրողները կասեր շիրմում ժնկաչորած կարավան,

դժոխային տանջանքների գտատապարտված մի նախիր,

հողմանալած ու թևաթափ, խեղճ հավքերի մի յերած,

միշտ ցան ու ցիր կիրճերի մեջ՝ տանջանքներից ինենթացած

կարու կյանքի մրբիկներին ու փրկարար փոթորկին

մում եյին Բրաբանցման հայունությանը—մարտիկներ...

Եկ զուք յեկաք աշխատանքի զորաշարքով հաղթական

հեղաշրջման տափուր գլուխթեծաղ նյութեցիք...

Ուր վոր անցաք, սպանցանոց, զամբարան եր մահանոտ,

ուր վոր անցաք, շիրմիներն և լ ծաղկոցների փոխեցան...

Ուր վոր անցաք, տնեեքների, հեծկլատանքի ովկյանոս,

ուր վոր անցաք ձեզ ուղկցեց բերկանքն անանց վոնց փառոս...

Ճանապարհը ձեր արյուն եր մի դիվային տանջարան

ճանապարհը ձեր ծաղկավետ բարաստանի փոխեցավ...

Մվկների, ձենճերների, մեռելների զժողքում

կյանք նյութեցիք, անարատում կյանք, նոր որերի վառ բերկանք...

Փառք ձեր անցաք ճանապարհին հեղաշրջման մարտիկներ,

վոր մահաթույն գերեզմանը քաղաքների փոխեցիք,

վերածնման հուր հույգերի մի տենչանքով տնապառ,

մողովզի սրտում հնչող անազանգը մեջեցիք...

Ու յես վորդին լեռնացանցի ասպրումներով իմ արրշին,

իմ անմոռաց ընկերների հավետ անանց հետքերում,

թեւ հեռու ձեր շարքերից ու խորթացած պայքարին,—

ձեզ եմ յերգում լեռնաշխարհ տանջարանի վորդիներ,

վոր մահաթույն, ու անցյալի հետքերը հար պիտ ցրեք,

ծաղկող յերկրի ծաղկապարզող աշխատանքի մարտիկներ...

ԴԺՈՂՔԻՑ ՀԵՏՈ

Տարտարոսների պահապան զամբոի
ոռնոցով անլուո, ջարդված գլուխը
թաթերում գրկած հովազի նման,
անրույժ, մահացու իր վերքը լիզող
առյուծի նման դարեր ու դարեր
մենք վողբացել ենք մեր կյանքը գաման:

Դարավոր թույնի խեղդված հեղեղում
լիռնակիբռների գոգերում անձուկ
արնոտ մատներով փորել ենք անհույն
մեր գերեզմանը և ապրել սակայն
սեփական մարմնի հյութերը լափող
առասպելական չարքերի նման ..

Ամեն մի քարը մեր այն դժողքի—
մի դար եր խլված ուրիշի կյանքից
ամեն վայրկյանը մեր այն տանջանքի
մի դար եր հյուսված մահվան տագնապից.
լիռնակիբռներում դարեր ու դարեր
մենք վողբացել ենք ովկյանն արյան...

Մեր շիրիթերում սեփականության
անաշք, անտառմ վիշապը խելառ
և, այն որերին յուր ծաղրն եր թքում
մեր մանուկների ջարդված զանգերի
արնոտ ուղեղից ներկված դժողքի
այն զարհուրելի մայթերի վրա...

Այն տարտարոսում դարեր ու դարեր
մահացածների գանգերն են դարսել,
կերտել դդիակներ, պարահանդեսի
արնոտ կրկեսներ, կեղծավոր փրկչի

անզոր աղոթքի հիմար տաճարներ
մեր այն որերի հրեշի համար...

Վշտալենների ու դադաթներին
արյան, արցունքի ամպերն են խեղող
կուտակվել անվերջ, բանվոր մարդկության
մեր այն կիրճերում թափված քրաինքի
այրող գորշին խառնված տմպերին
յերկունքն են յերկնել ապստամբության...

Ա՛, շքեղ որե՞ր, յերբ իրարանցման
կրօնա զրկի մեջ առաջին անզամ
վորպես խավարից փրկված ճառադայթ
լսվել և ցասկոտ կանչը բանվորի,
«խաղաղությունը խարխուլ հյուղերին»,
«կոփին անհաշտ գեղ գղիակներին»:

Անմոռաց որե՞ր... Բարրիկադների
արյունոտ փոշին այրված հյուղերի
փլվածքների մեջ կերաված դղիակի
պատշկամբներում պարող վիշապին
և, այն որերին մոխիր և դարձել
ու մոխիրներում նու աշխատանքի
բանվոր մարդկության նոր հայրենիքի
հիմքն և կառուցել և այսոր անա
առաջին ճիշն ենք լսում բերկրանքի,
այսոր և հավետ փրկված դժողքից
մենք հիմն ենք յերգում նոր արշալույսի
նոր ծնվող կյանքի շքեղ որերի...

1926 թ.
Ստեփանակերտ

* * *

Բոլոր նրանց, ովքեր յերեկ կային մեղ հետ,
բոլոր նրանց, ովքեր յերեկ կռւս, հաղթական
բանակ կազմած յերազել են այսորը վառ՝
վողջակիզող ջահեր գարձած լուսավորել
ու հարթել են ճանապարհը մեր այսորվա,
հիմք են դարձել Հաղթանակի Հուշարձանին

Հոկտեմբերյան:

Բոլոր նրանց, վոր մոխրացել ու ել չկան,
այն անանուն հերոսների խիտ շարքերին,
վոր անկաշառ, վեհ ցանկությամբ ձգտել են սիւմ
ազատություն և անխօրտակ մրրկումով
պայքարել են հին աշխարհի կարգերի դեմ
ու այդ կավում շիրիմ գտել իրենց համար

Հոկտեմբերյան...

Բոլոր նրանց, ովքեր յերեկ դեռ ծառացած՝
բռնակալի գավերի դեմ՝ շեփորել են
գովքն այսորվա մեր յերազած հաղթանակի,
ովքեր շքեղ այցն են յերգել մեր նոր կյանքի
ու հորինել կարգերը նոր, Բանվորական
յերկիրը նոր՝ նոր հույսերով ու տենչերով

Հոկտեմբերյան...

Բոլոր նրանց, ովքեր կային մեր մեծ Մարտուն,
ովքեր այժմ մոխրացել են ու ել չկան...
Հոկտեմբերյան մեր մեծ գարնան ծաղիկներին,
վոր շորթվել են մրրկառատ մեր այս ճամբրին,
մեր արեի վոսկեկանուուր ճաճանչներին,
վոր խեղգվել են հին աշխարհի գարշ, գիվային
խավարներից... .

Հոկտեմբերյան փառքի պսակ մենք կհյուսենք
հավերժական: Տես, վրտնկայս բանվորական
յերկիրը վողջ, վորպիս կովի շունչը հսկա,

վորպես ահեղ մըրիկների յերկունքը հաղթ,
այսոր նորից իր հույզերով Հոկտեմբերյան
հիշում և դեռ իր անանուն, նահատակված
ընկերներին...

Հիշում և նա բարբիկագի այն կողմն անցած
հաստամարմին գամբոներին, վոր գիշատիչ
ժանիքներով սիրան են խոցել աշխատանքի,
արյունամած փողոցներում արյուն լիզել
ու զաղբելի ռունցներով հրեշային
փառաբանել, ներբողել են կարգերը հին,
գաղանային:

Հիշում և դեռ վերքերը հին, վերքերը նոր
հար աշխատող, միշտ կիսաքաղց ընկերների,
վոր կորացած, չոր մեջքերով քար են կրել,
դդիակների շարքիր կերտել գեղազարդված
դարձաներից ժանդարմների մորակներով
ցալից, սովից մեռնողների թաղն են քշվել
կամ բանտ տարվել...

Հիշում և նա կոշտերը հին, կոշտերը նոր՝
քաղցից սմկած ու կապտացած բյուր ձեռների,
այն բյուր մարդկանց, վոր քամել են վողջ աշխարհի
հյութերը թարմ և սեփական ցամքող արյան
ահեղ գնով բռնավորի քմքին ախորժ
մինչույք սարքել, կուշտ ապրելու կարոտից միշտ
մահ են դարձել...

Հիշում և դեռ աշխարհը վողջ բանվորական
և վոտնկայ յերդվում ենա ի հիշատակ
իր անանուն նահատակված ընկերների,
վոր կպութիւն իր վերջնական պայքարն ահեղ,
քար չի թողնի հին կարգերից քարի վրա,
կտարածե ամենուրեք կարգերը մեր
Հոկտեմբերյան...

Յեվ նա այսոր բազմամիլիոն, բազմալեզու
իր բանակն և կարգավորում, վոր միշտ պատրաստ,
զգաստ լինե, արշալույսից անարելված
բանտերի մոտ պահակ կանգնած գամբոներին
դամբան փորե և, բռնության կարգերը սև
խորտակելով, ազատ ապրե հզոր կամքով
Հոկտեմբերյան:

ԿՈՄԿՈՒՍԻՆ

Միւսանավառ ալիքները խոռվահույզ ովկյանի
արնափրփուր արեգակի վառ շողերով զարդարուն
հազարամյա բողոքների ցասման յերգով կատաղի
ծածանվում են հնուռներում, մանչում են ու շաշում.

Այս մեր յերգն և Հոկտեմբերյան այնպիս հպոր շառաչում...
Բազմադեպու ամբոխների հազարանուն շարքերում,
վոնց փոթորկի հզորացման մըրկումի գրկի մեջ,
բազմագորյան Աշխատանքի տոնն և տոնվում ամեն տեղ,
հազարամյա տանջանքիրին վախճան ասվում և անեծք...

Բազմադարյան ցասման յերգն և այսոր հնչում ամեն տեղ:
Գանգրատերե անտառի պես ժիորներն ամբոխի
զրոշազարդ փողոցները հեղեղել են կարմիրով,

մեծ պայքարի հաղթությունը շեփորելով քաջարի,
քաղաքները մի նոր կյանքի նոր հույզերով են ներկել...
Վողջ աշխարհը զինված հրով Հոկտեմբերյան խարույկի
-իրիմ պիտի դառնա հիմա մեր այն լքած որերի
և պիտ դառնա որորոցը նորակառույց նոր կյանքի...

— Որորոցը հաղթանակող Աշխատանքի կուռ կամքի...

Միւսանավառ ալիքները խոռվահույզ ծովների
ակոսում և Կոմելուսը՝ ձույլ, ելեքտրական, պողպատե
կամքի նամուլ, մտքի նամկով, զեպ արշալույս, գետ հանգրվան,
զեպ լուսառատ ժամանակի մուտքը շքեղ, հաղթական

— Յեվ մարդկային ովկյանոսը հետեւում և միշտ նրան:

Աշխատանքի, գեղեցկության յերկրաշենքը կստեղծե

և վերջ կտա շահագործման ու նշավակ բռնության,

Հոկտեմբերյան հզոր կամքով ելեքտրական, յերկաթե

մրրկումի արեների ճաճանչներով անխորտակ

լուսափրփուր ազատության յերկրաշենքը կստեղծե

Բանվորական թաղերը զորչ, գործարանվող յերկիրը մեծ,

Մուրճի, Սալի և Մանգաղի աշխարհները միաձույլ

աշխատանքի պոռթկումներով գծված ուղղով անյերեւ
 հետեւմ են կոմմուննավի ղեկը վարող նավաստուն
 տարերային ու ուժերին հաղթանակող նավաստուն...
 Գաղութներն արյունամած, հացին ծախված բյուր մարդիկ
 բռնակալի սրից գերված նկուզներում կիսաքաղց
 լացից, վշտից և զրկանքից, տառապանքից գազագած
 հույսի անմեռ սպասումով և փրկության կարոտով
 տենչում են միշտ կոմմուննավի ղեկը վարող նավաստուն:
 Ու մեծ նավի կայմին թառած ուրուներին գիշակեր
 ու մեծ նավի քիթը լիզող մեղի զորտերին կիսամեռ
 Հոկտեմբերյան շնչովն անեղ կյանքից հետո յե քշում,
 Հոկտեմբերյան հրովն անեղ ճահիճներումն և վառում...
 Ու, ճեղքելով խոռվահույզ ալիքներն ովկյանի,
 ընթանում ե միշտ անյերեր իր ընդդժած ուղիով
 ղեպի շքեղ հաղթանակը Հոկտեմբերյան պայքարի,
 վոր տեր, սարուկ եւ չլինեն յերկրաշենքում բովանդակ...
 — Փառք նավաստուն, նրա ճամբին, նրա կամքին անխորտակ...

Սահմանակերտ

1927 թ.

ՄԵՂՐԱՇՈՒՐԹ, ՇՈԿՈԼԱԹ...

Ընկերություն

Հրահրող հրերի հուր հրով հրված հուրերում
հրձիգ հրի, հրշեջ հրի հրածինն և հուրը մարող
հրե աշխարհը մեր հզոր:

Բուրժույ լաթե, շոկոլաթե աղջիկ-պարոն,
հրխաղը քաղաղը, մանգաղը մահն և ձեր փառքի,
վոսկու զնզուն տոփանքի:

Ասում եք, հուզվում եք շանթահար ոձի պես
կիա փաթթած, յերբ մոր ձեզ մըրիկներն են շնչով վես
զլորում, թափալում փոշու պիս:

Շոկոլաթե աղջիկ-պարոն, վոսկեկար լաթերով
պատանված մեղրաշուրթ, քնքույշ նուրբ տիկիններ
Հոկտեմբերը ձեր վզին և չոքել:

Վոխերիմ վոնց շիրիմ վոսկեկար պատանքով
զարդարված աշխարհին,—կանչում ե, թանչում
վոնց մոլար, խելագար զարույթի ցասման ծով
Հոկտեմբերը մեր:

Որերի լաթ, շոկոլաթ, ցնցոտի վոսկեապատ
եյ բուրժույ սարսափիր...

Զուլհակն ե պատանքիդ, տես, կանգնել...
Գեղեղին...

Դեպի հուն, գեպի հունը հործանքիդ վարանոտ
մըրկի քլունգով պիտ փորե ակունքը ժահըերիդ
մահամերձ ինչույթում խնդացող դու բուրժույ.

պիտ մեռնես:

Հրերիդ մոխիրն ել պիտ վառե
հրե հրձիգը մեր հրշեջ, հրածին Գեղեղին...

Ի՞նչ ե, չեք սիրում, վոր սիրուն, շողշողուն
շորերը ձեր պիտ վառվեն որերի հրերում...

Յավմւմ եք հա, վոր հիմա բանվորի, մեռնողի
արյան գին աթենքի գիշերներ չեք սարգում...
Շոկութե աղջիկ-պարոն, բաղեղամազ, խոպոպազարդ
մեղրաշուրթ տիկիններ:

ԳԵՊԵՌԻ-Ն չի սիրում գանգրահեր ախինիկներ,
ԳԵՊԵՌԻ-Ն չի սիրել, չի սիրում:
Սվվում ե ձեր սվվացող աշխարհը ձեր սվվացող ոձերի
գրոց ե, դղրդոց, ցանման բոց, մահվան խոց.
ոռնացող բանակն և ձեր իր վերջին ճամբան և նա ոռնում
հուզվում ե, ուզում ե կոմյիրիտ ակումբը գրավել
թափալման, գալարման ոթյակներ կառուցել...
Կումկուսի շենքերն և նա տենչում, պալատը խորհուրդի,
սրահներում բյուրավոր, վոր մարդկանց նա թեխտի...
Բանվորի Մուրճն և նա տենչում Մանգաղը զյուղացու,
վոր թույնով սողոսկա, տա մեղ վերք մահացու...
Ցեվ սակայն ԳԵՊԵՌԻ-Ն չի սարսել չի սարսում:
ԳԵՊԵՌԻ-Ն... Դեպի հուն,
դեպի հունը հորձանքիդ վարանոտ
բրիչով յերկաթե պիտ բրե տկունքը դավերիդ
պիտ խեխտե ժանտախտում դեռ պարող ժանդարմիդ
եյ բուրժույ սարսափիր:
Պիտ մեռնես, ԳԵՊԵՌԻ-Ն յերբ կապրե:

ԸՆԿԵՐ Ա. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻՆ

Նախ ցաք ու ցրիվ ավերակների
կմաղբանման տների մի ցանց,
ցավի տնելոցներ յեկ ափսոսանի
մի կումարային տանօանք թեժ, անանց...
Նախ դալահառաջ նեծկտանեների,—
նեծեծյանեների մրւունչ-տրտունջներ,
ապա հանդուզն ու խիզախ կամքի
կերտող, կառուցող, աննինչ անուրջներ...
Ու մոխիրներում մեր անցած կյանքի
հազարբուրմանք ծաղկոց կինստառ,
խորխած հնի ցից պատերի դեմ
նորք կառուցվող, բեղ ու անպարս...
Այս նանապարհով մեծ մարդն և անցել,
վորի վարկյանն ել խզուր չի անցնում,
այս նանապարհով այդ դու յես անցել
յեկ ու ապրածին չկա մոռացում:

Ստեփանակերտ
1928 Ա.

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Քառատրոփի վոնց ամպրոպ բարձրանում են ջոկատները ձեր.
բարձրանում են ջոկատները ձեր լեռն ի վեր:

Պոսկեղես որերի արհավառ լույսերի լեռն ի վեր ճամբեքում
պարզել եք անլքում պայքարի վոսկեփունջ ու բոսոր
գրոշները հուր:

Ծնկերներ:

Հուզվում ե, ուզում և սիրոս ել վոնց մի թել

փաթաթվել ձեր կյանքի վազքի հետ.

Կյանչում ե, տենչում փաթաթվել

կարուսել որերի հրավառ վազքի հետ:

Վաշտեր են, գնդեր են, բանակ ե, մի տարափ մարդկային

հեղեղ ե, սրբնթաց լեռն ի վեր հուր հեղեղ:

Ժամանակը մի պառավ ջազու

ծերության ալյուրն և մտզում մաղերիս վրա

ժամանակը տեսքովն իր ազգու

մտախուզում և աչքերս հիմա...

Քառատրոփ սլացեք լուսատենչ ջոկատներ:

Թող թնդյանը ձեր թնդանոթ կամքի

վորոտա կարոտն իմ ձեր ճամշին:

Ու թող ճաճանչը ձեր կյանքի

միշտ հուզե ծղտումով ցամաքած վոնց մի ծով պառաված իմ հոգին:

Փոշիներում թող հետ

ճամբեքի հոնույցում

թող դողա սիրոտն իմ թեկերեկուն

փոշիների հևացող ուղիների հանգույցում

ել չկա ափսոսում:

Քառատրոփ լեռն ի վեր սլացեք ջոկատներ:

Դեալ արփին դուք թուեք լուսատենչ լնկերներ:

Վաղորդյան արշալույս լույսերում

վագաթին

ձեր կամքի դրոշն և ծածանվում

գրոշը մեր կյանքի կարմիրի...

Սլացեք լեռն ի վեր, ոլացեք ընկերներ:

* * *

Լուսափուր փուր յերազներում ոչորվում և քո հոգին
ու խնդագին մի բերկը անքով գու ժպտում ևս ամենքին.
սաղարթախիտ անտառի պես անցնող կանանց շարքերում
իզուր չե, վոր ծիրանավառ դրոշակիր ևս հիմի...
— Կանանց տոնին վրնց լուսե զանգ զբնդում և քո հոգին:
Ապագան և զորովագութ փոտծ փեշերը ճամբիոց,
յերբներանգ են ժպիտները վաղդ դարբնող որերի,
ՎԵԿԱՊԵՆ և աղատություն շեփորովք քո կյանքիդ...
Աշխատանքիդ կուռ բանակով դու միշտ առաջ ոլացիր:
Զարդարել են կարմիրներն ամբողջ կյանքն ու քո ուղին,
յեթե կուզես, կարմիր և և այսոր խնդուն քո հոգին...
Անազգական խավարներից հայիտ փրկված դու հիմի
նախնիքներիդ ստրկական շղթաները խորտակած՝
իզուր չե, վոր պայքարելու և տոնելու կամքն ունես, —
նվաճումներ չե փոված են այսոր անցած քո ճամբին...
—

ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒՄ

ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒՄ

Խելացնոր թիմը և իջել հիմա հիվանդ իմ հոգուն,
 կասես, անկյանք շիրիմների խենթ յերդիչն եմ, վոր ելի
 լրած տշխաւյժ աղմուկները կենսաթրթիու ժխորի՝
 հետ եմ զարձել զերեղմանված այս քաղաքը հայրենի...
 վոլոք, զանգեր, վոսկրոտկույտեր... Դիաղաշտ և կասես հար,
 զիակների մի ամրոց և, զարպաներն ավերված,
 ահա սիրված մեր ծաղկոցը շատրվանի յեղերքին
 ժաղավինված փողոցներով վարից, վերից ու ձախից,
 այստեղ ահա կախաղանն եր արյունոռչու վաշայի.
 այս ակումբն եր սիրված վայրն այն մոխրացած որերի...
 այստեղ ահա այս ծրագալած շատրվանի քարերին
 հաղարտվոր ձեռք և զիակել ջրերի հետ խաղացող
 մորթված մանկանց ձեռք և դիակել, ձեռք և դիակել, վոր հետո
 այս փողոցում մոխիր զարձուծ խտունվել են նույն ջրերին...
 Այստեղ ահա զորդազարդված պատշկամբից ակումբի
 ձառ և խոսել արյունաբռու մավզերիստն այն որին,
 հայզուկային ճառն և խոսել հրազինված փոտից-ձեռք,
 ձառ և խոսել, թողիլ, փախել, վողջը մատնել կրակին...
 Ա՛, հրիփպած այստեղ պատից իմ ընկերոջ դաշնամուրի
 փղոսկրյա լեզվակների շարքն և միայն մունջ կախված,
 կասես, հիմի պիտի լավիտիուր յերգը զերեղմանվող քաղաքի,
 տխուր յերթը հուզարկավոր բյուր մոխրացած սրտերի...
 Ամենուրեք մահասարսուռ, մոխրամշուշ գամբարան,
 կասես, ելի քարերի տակ հազարավոր մարդիկ կան՝
 սարսափահար ու շնչահատ սպասելիս իմ այցին,
 ամենուրեք անհիշատակ, յեղինջածածկ գերեղման...
 Կասես, այստեղ հին զենենի զավակներն են, վոր ելի
 դեշ են լափում, մարդկային միս, արնաշաղախ մանկան միս,
 գեշ են լափում ու հողոտում; անցնող մարդու մեռած սիրտ,
 կասես, այստեղ վողջակիզվող սև գեհենն և հիմի...

ԽԵՆԹԻ ՆՄԱՆ յես վազում եմ փողցներով վեր ու վար
 ու չգիտեմ փախչում եմ յես հանդիպումից, թե՞ համառ
 ապրող տենչի մի անիմաստ ու անգիտակ ցասումով
 ձգտում եմ դեռ նոր շիրիմներ, գերեզմաններ տեսնելու.
 գիտեմ միայն, վոր շնչահատ յես վազում եմ դեպ առաջ:
 Ահա յեկա սիրված ավեր մեր պարտեզը վաղեմի,
 կասես, ելի այդ ծառուղով գնում ենք մենք ժողովի,
 Համբարձումյան, Հովհաննիսյան, Ղարագյողյան, Կամարին,
 Ցես, Շադունցը, Անդրանիկը, պարթևատես Ռուբենին
 մեռած, ապրող ընկերներիս շարքերը ձիգ, աղմկոտ...
 Կասես, ելի պիտի ապրե վողջակիզված և մեր տունը ժողովի ..
 Բըր... սպասեք, ել հիվանդ եմ.
 Հեռու տարեք ինձ այս ավեր ու անմռունչ քաղաքից,
 ուր ամեն ինչ հարազատ եր հիվանդագին իմ հոգուն,
 ուր ամեն ինչ յես սիրում եմ խելացնոր մի սիրով,
 հեռու տարեք ընկերներիս այս կուափնված դիյերից,
 ա՛, մոխրացած և մոխրածակ դիյերից...
 Ընկերներս զիափոշին թող չցըվէ իմ վազքից,—
 խելազարված ջերմ սիրողիս այս անիմաստ, խենթ վազքից ..

ԱՄՐԱՍՏԱՆԱԳԻՐ

Ե՞յ, դատավորներ,
գուշ, վոր որենքի, ձեւականության
ծառաներն եք սոսկ, դուք չե՛ յեզակի
մարդասպանության, յեղեռնի զործի,
չնչին գողության, բռնաբարության,
յուրացման, շորթման, թեկուղ կեղծիքի
Նշույներն անգում դատում եք շուքով,—
դատապարատմ եք կալանքի, փակման
ամեն ցնցուի մի կյանք, մի հանցանք...

Դուք դատավորներ,
վոր արյունաբրու հանդուզն, խիզախ
միտքն եք կաշկանդում ձեր որենքներով
և թե ու խանդի հախուռն ցաման
հրերով վառված մի օիրտ բողոքե,
փորձե տապալել փառքը դիմացնի
թեկուղ չաջողե նրան և լինել
հաղթողը կովի—դուք պատրաստ եք միշտ
իրարազանելու, դատապարտելու,
պատժելու նրան...

Ե՞յ, դատավորներ...

Գնդակահարման սարսափից հիմա
հազար ու հազար դներ կան սանձված
մարդկանց սրտերում, մարդկանց մտքերում.
Դներ՝ յեղեռնի, դներ նենդ, խարդախ,
դներ հար ապրով, զսպված արցունքի,
խեխաված բողոքի, վշտի, տանջանքի,
դներ, վոր միայն սանձված զարույթով
արյունի յերկրում նոր յելք են փնտրում...
Գոռող որենքի շքեղ դահլիճի
զարդ դատավորներ, քրքրեք փոշոտ
որենքները ձեր, կգտնեք արդյոք
խենթ տարիների պատույների մեջ
կուտակված թույնի ժայթքումը պատժող

գեթ մի խոսք, մի բառ, վոր դատապարտվեր
գաղանը խելառ...

Հազար տակ վառված
քաղաքը մոխիր, հազար տակ վառված
շիրիմն իմ մոր, անծածկ շիրիմը
հազար մայրերի, հազար ու հազար
խղված կյանքերի... Այսուհեղ դանդիս մեջ
յավագար մտքիս ծալքերում խելառ
ապրող պատկերը նախնի քաղաքի,
այստեղ զանգիս մեջ անվերջ վիստացող
ավերակների շարանները ձիգ,
անմռունչ թափված վոսկը մարդկանց
վկա կկանչեմ... Դատեցեք նրանց,
ովքեր որհներգել յերկնել են զաղիր
այս ծովն արյունի, զատեցեք նրանց,
ովքեր կեղծավոր վողբն են հորիննել
այս գամբարանի, վողբացել հեռվում...
պղնձամորուս բռնակալ յերգչի,
Հռոմեա ավերող, Հռոմը լացող
Ներոնի նման... Մեծ քաղաքներում
հիմար վիստացող, գիրզ բազմոցներում
հափրող այն զաղիր մարմիններին մեղկ,
վոր սոսկ խեղկատակ բնության կամքով
կերպարանքն ունեն մարդկային տեսքի...
Դատեցեք անդարձ... Յես դատախազն ևմ
ձեր ահեղ դատի, դատեցեք նրանց:
Թողեք ձեր խոսքն անողոք լինի
այս դահիճների վոհմակի համար...
Թողեք ձեր խոսքը դարերի ձեռքում
անսասան զնդան, անկործան մի մուրճ,
մի կռան լինի սրանց հուշերը,
սրանց հետքերը հավիտյան ցըող...

* * *

Այս հնամաշ ճամբի վրա նորից կանգնած յես ահա
մտամոլոր վորոճում եմ ապրած հեքյաթը նրա.

քանի՛, քանի շարաններ են յեկել, անցել այլ մարդկանց,
յեկել, անցել ու մնջել են վնոց հետքերը և նրանց.

և տյառեղից տեսել են միշտ հին քաղաքը գեղատես
լուսն կրծքին անուրջի պես փռված, շքեղ, հաղթական,

շենքաշարքեր, ծառեր, վարդեր, կանաչազարդ, լայն գաշտեր,
աղտմանդյա ցողով զուգված գիրդ, հեղաչյա շռշաններ,

շատրվանի ծիածանող ցնցուղները միշտ ուրախ,

ջրե փողու խաղերն ողում կապուտագեղ ու քնարը,

կասես, քնքույշ, հեքյաթային մի կենառւրախ նորահարս
իր հաղթ կրծքի ծաղիկներով ծաղկազարդված մեր Շուշին...

Տեսել են միշտ ուրախ հեռվում փողոցներում յերկար, նեղ
կմաղքի պես ամկած մարդկանց շարանները խեղճերի, —

քրքիջներով, վառ յերգերով հավիտ, ուրախ, անտրտում

և այլ մարդկանց գեղազարդված ծաղիկներով ու վոսկով.

աղոթք, անհեծք, խինդ ու հառաչ, ատելություն, քնքույշ սեր
և սիրերգներ անզուսապ ու վառ ու մահերգներ սրտառուչ,

ժպիտ, արցունք, քրքիջ ու լաց, կյանքեր՝ չարքաշ, տոնական,
յերջանկություն, դառն տանջանք, յերգեր՝ հույսի, հուսահատ,

բազմահազար ապրումների հսկայական մի քանչ...

Փլատակված այս վայրերում կյանքն եր հուզիչ, բազմատենչ...

Կոփների և հաշտության բազմահազար ձգտումներ,

մարդիկ հարուստ և այլանդակ, և գեղեցիկ, աղքատ, ծեր,

այժմ սակայն գերեզմանված հսկայական քաղաքի՝

սոսկ հետքերն են մահատեսիլ, կմաղքացած ու դաժան,

ու լայն ու նեղ փողոցներում, մոխիրներում համասփյուռ

միորինակ սոսկումների, ապրումների գերեզման...

Ու հնամաշ ճամբի վրա նորից կանգնած յես ահա

մտամոլոր վորոճում եմ ապրած հեքյաթը նրա...

Թա՞նի, քանի շարաններ են յեկել, անցել այլ մարդկանց,
յեկել անցել ու մնջել են վոնց հետքերը և նրանց...
Ու մի քնքույշ հավատ ե, զոր հուզում և ինձ այս պահին,
զոր կավերգեն մեծ զժողքի անփառունակ հետքերը հին,
զործարանվող յերկիրը մեր տոկունությամբն իր համառ,
հաղթ, շինարար աշխատանքի ընդվզումով մեզ համար
մոխիրներից, ծվեններից, բազմաչարչար հուշերից
պիտի հիմնե յեղբայրության ու հաշտ կյանքի նոր նուշին...
Ու կարծում եմ, զոր այլ մարդիկ հաղթանակի յերգերով
կցան, կանցնեն նորին ծաղկած, կենսաթրթիո այս ճամրով.
մա, մի քնքույշ հավատ ե, զոր հուզում և ինձ այս պահին,
զոր հետքերն այս զժողքի անվերադարձ պիտ կորչեն...

Ստեփանակերտ
1926 թ.

ԱՌԱՆՑ ԴԱՎԱՆԱՐԻ



* * *

Արդյոք պիտի գաս սովից, տանջանքից դադազած դեմքով,
արնոտ վաներով դու քո նոր ճամբան լուս պիտի քայլես...
Վրեժիսնղբության բուռն ցասումի մահաթույն շնչով
դու վողջ աշխարհը դիամբումբերի պիտի վերածես...
Թէ՞ հոգնեց և նա, վոր զեկավարն և անհայտության մեջ
ձգվող գարերի, վոր վիշտն և դարբնել ու տանջանքն անվերջ։
Արդյոք պիտի գաս կախաղանների թոկով ու կանցով,—
գլխաւամտն կոճղ դու պիտի տնկեմ ամենքիս տռաջ,
ստունսարտությամբ մեղ պիտի զրկես արնոտ ձեռներով,
վողջ կյանքը գարձնես մտնվոն խոների այլանդակ մի ծրվ...
Թէ՞ հոգնեց և նա, վոր զեկավարն և անհայտության մեջ
ձգվող գարերի, վոր մահն և յուրեկել և արյուն անվերջ...
Խնչակես ել վոր գաս, մենք չենք յերկնչում ու պատրաստ ենք միշտ
քայլել քո ցանած տատասկով հարուստ անհայտ ճամփով.
անթիվ վարերին խեխտող, անհօղդող բռունցքներիդ դեմ
մենք պատրաստ կանգնած արի և զակիր, ել չենք սարսափում
տանջանքի՝ պայքար, ճամբեքիդ անցորդ, մենք քո դեմ մարտիկ
դու հավերժության լոկ ակնթարդդ, արի և անցիր...

Քեֆլիս

1918 թ.

* *

Անյուռ անհեծքի թույնով ծանրացած
 կախաղանների անծայր շարանն և
 մեր ճամբին կանգնած և ծանոթ մարդկանց
 ջարդված գանգերի ու սրախողխող
 արնոտ գիյերի այրվող մսերի
 խեխտող ճենձերն և մեր միաքը հուզում,

ասլիել ենք ուզում:

Մութ խրճիթներում խսիրների մեջ
 մեր սիրած մարդկանց մահվան ապահապի
 ու հոգեարփի տնքոցն ենք լուսմ,
 ցնցոտիներում ցալից գալկացած
 հիվանդ, վշտահար, քաղցած վորբերի
 ուտելու տենչով ոյրվող աչքերի

արցունքն ենք տեսնում:

Այս հաղթ, վերամբարձ գործարաններում
 խամրող կյանքերի, անթիվ մուրճերի
 անդուլ շարժումից մեռնող սրաների
 վեհ ըմբուտացման նոր յերգն ենք հյուսում.
 խարխափումների դժնի ճամբեքում
 վես մարտիկների այս մեծ ժխորում

մենք յելք ենք վնարում:

Մեր նախնիքների անուրջ-տեսիլի
 աշխարհն ենք այրում, բութ ունախանձոտ
 մեր չար աստծո տաճարն ավերում...

Անդրշիրմյան զառանցանքների
 մշուշն ենք ցրում և կռվալ միայն
 առանց աղոթքի և ազերսանքի

մեր բախտն ենք կոռում...

Համառ պայքարի դժնի ճամբեքում
 մեր վերջին մարտի քայլերգն ենք յերգում...

* * *

Շատ՝ զնչից ընկած վոսկորն ենք կլծել
խուզ փողոցներում մենք ամբողջ տարին.
կապտած մասներով աղըն ենք քրքրել
ու կեր վորոնել մեր զավակներին.
Մեր հացն անկլուս անեծքից թրձված
կարծր աղյուս եր... Մեր ջուրն արյունոտ
թարախ եր զազիր... Մեր ապաստանը
անթիվ գորբերի գամբարանն անծայր...
Դոնսեդուռ ընկած հաղթ պատերի տակ
մենք գարպասներն ենք ծեծել գեղազարդ,
պարզել մեր ձեռքը փափկասուն մարդկանց,
մեռնողի ժպտով փողջունել նրանց...
Կյանքը մեզ համար տանջանքի մի ծով
նոր որը՝ նոր ցավ, նոր այդը՝ նոր վիշտ,
շան փորջը՝ պայտա և հափառունը
շքեղ զդիակ եր մեռնողի համար,
Խուլ փողոցներում մենք ամբողջ տարին
անտեր ու անթաղ մեր մեռելների
վողըն ենք հորինել... Քամու հետ փարված,
քամու հետ լացել սև գիշերներին...
Այս բոլորից յետ թշվառ մարդկության
դուրավոր մեղքի քավության համար
զու նորից յեկար... Մենք խաչդ տեսանք
և բիրտ խաչողի հրճվանքը միայն...
Գողգոթաներից Գողգոթա անցանք,
չկար հարության տռավոսը գեղ,
խարխափումերից մեռնում ենք ահա,
քեզնից փրկություն մենք դարձյալ հուսանք...
Յեկար զու նորից և լաց և թախիծ...
Դիաթումբերի խեխտող ձենձերն և
քո շունչը բուրում... Թու ակնաթարին և
հազար խեղճերի վախճանը նյութում...
Թեզ ուրվականիդ մահվան խոհերի,
հազար կյանքերի, հազար սրտերի
տնտասան դահճիդ... Մենք չենք վողջունում.
անեծք և զարշանք քեզ ուզարկողին...

* * *

Ասում են, վոր կաս յեվ լուրը յերկնից
միշտ մահ ես նետել աօխարհի համար.
նախանձու ու չար, զարսւյրով անպարտ
սեվ բախսն ես նյուրել գու մարդու համար...
Ասում են, վոր կաս անմոռ ու տնամաց
իշխում ես արյտեղ... Գահդ՝ անկործան,
ույժդ անսահման, ինքդ՝ անվախման,
վոյզ տիեզերը բո կամքն է անպարտ...
Ասում են, վոր կաս յեվ սորկուրյան
ժան զըրաների զուր պղակներով
կապել ես մարդկանց յերկրին նավիսյան,
վոր անվերջ ոռղան յեվ գուրդ մուրան...
Ասում են, վոր կաս յեվ ամեն անզամ,
յերք մարդն է լալիս, նրենվում է նոզիդ,
վոր նրա խինոք ծանր տաճօանի է,
անկեղծ երքիզ՝ խոր վիշ նեզ համար...
Ասում են, վոր կաս, բայց չեմ հափառում,
վոր գու իրոք կաս... Տես, բո սորուկը
ոզի մեջ նախում է, յերկրից ազատված
բո բարձունքներն է անվերջ նրկիզում:
Ասում են, վոր կաս... Բայց գիտեմ մի որ
ինքդ ել Վարպետ զաղտնիք ահապոր
տարածուրյան մեջ պիտ ցնդիս անհետ,
եղ վոչ վոճ յերբեք չի ասի, թե կաս—
յեվ գու իշխողդ պիտի մահանա
ու խոստովանես աօխարհի առաջ,
վոր մարդն է աստված, չոլոր մարդն է ծնիլ
նեզ ու կործանել իր փառքի համար:

ՂԱԶԱՆՁԵՑՈՑ ՅԵԿԵՂԵՑՈՒ ՓԼԱՏԱԿՆԵՐՈՒՄ

Գմբեթներդ յերկնակարկառ, վսիմաշուք ու դաժան
քո ամրանիստ, շքեղաշուք պատերդ հար անսասասն
ամրոցակերպ խորաններիդ քանդակները սրբատառ
ասմ, ինչնու չքացել են յեկեղեցիդ փրչկական...
Կամարներդ խորախորհուրդ, «յուներդ հաղթ» ու մարմեղ,
հազարամյա աղոթքներով քո ջահերը բրոնզյա,
պատկերներդ ճառագայթով, արծաթաձույլ, վոսկեղոծ
մւր են հիմա մասունքներդ կաղապարված, «հրաշագործ»...
միունաոծ ավագանիդ «սրբազնաբույր» հեղուկով
որհնված մանկանց աճյունները, սեղանիդ մոտ հազարավոր
որհներգներով «անքակաելի» կապված իրար զույգերի
աճյուններն մւր են հիմի յեկեղեցիդ անպատկառ...
Տարիների մըրիկներն են բերվել աստեղ զագաղված,
տարիների մըրիկները՝ հավետ սանձված ու խեխտված...
Ու անտարբեր, զոռ վիճությամբ խինդն ու լացն ես զու զիտել
քեզ աղոթող և խնկարկող հազարավոր սրաերի...
Գիհենածին այն որերին գմբեթներդ խաչազարդ
հրաշքներիդ ապագինած, հրաշքներիդ աղոթող
այրվող մարդկանց անսեծքներից ու բոցավառ արյունից
մահատարած այն որերին գմբեթներդ խանձվեցան...
Ռուր մնաց քո հրաշափառ փրկությունդ սուտ ու կեղծ,
յերբ անսկիզը ու անվախճան ժամանակի ցնցոտուն, —
յերկնի, յերկրի «ամենապոր» ու կեղծավոր աստծուն
աղոթում եր գետնին փոփած ամբոխը խեղճ, սեավոր...
Ռուր մնաց քո զթությունը յերկնաճաճանչ, արեշիթ,
յերբ ողակված խուժաններով սարսափահար նախըի պես
իր արյան մեջ չոքած այնպես մարդն եր մուրում հրավառ,
փլատակվող մեծությանդ հիմքում անզոր մեռնելիս...
Ռուր մնացին աղոթքները նահատակված այն մանկանց

վեմիդ վրա սրախողխող, անոգնական, խեղճ մարդկանց...
 Դու չե՛ կայիր այն որերին մըրկաթափ հավքի պես
 քեզ ողակող փողոցներով քշվում եյին յերբ թշվառ
 ապավինված խաչիդ ույժին մեր մայրերը սարսափահար...
 ԶԵ՛ դու կայիր այն որերին խարդախության սև տաճար...
 Հրեշային պատերդ ցից մոխրամորմոք քաղաքում
 քեզ պղծողի նախիրներին զոմ են զարձել վիթխարի, —
 յեղինջներ են սեմիդ բուսել, արյունասուն յեղինջներ...
 Յերկնակարկառ զմբեթներդ յեղինջազարդ են հիմի...
 Ռուր մնաց քո ույժդ հապա, մէր մնաց և զութը քո.
 չկա աստված և ույժը քո և գութը քո սուտ են յեղել
 աղոթքներդ սուտ են յեղել, խոստումներդ սուտ ու կեղծ...
 Չկա աստված... Արյունարրու մարդն և կերտել կեղծիքից
 քեզ, վոր խարե սրախողխող մեռնողներին աղոթքով...
 Իրավ ենք մենք, վոր պիտ վլենք քեզ քո հիմքում արնաներկ,
 ռամենազոր» աստծո շիրմին, վոր հուշարձան պիտ կանզնենք
 կառուցվածքը մեր նոր շնչափ կրօնաթող, նոր կյանքին
 Իրավ ենք մենք, վոր պիտ փշբենք քեզ քո հիմքում արնաներկ...
 Արյունարույր կերտվածքը քո, յերբ վերանա աշխարհից,
 աշխատանքի ուժանակից փլչես ու ցած տապալվես,
 քո պատերի քարից կերտված ահեղաշուք, հսկայական
 յերբ բարձրանա ծխափողը գործարանի շշակով,
 պիտի լսվի խոսքն անվիշտ, յեղբայրական վառ սիրո,
 յերջոնկարար պիտի յերգեմ ոնդարձ մահդ տոնելով, —
 — Յերբ վոր լսվի առաջին զիլ կանչը հուժկու շշակի,
 յերբ վոր լսվի առավոտյան մեր նոր յերգը նոր կյանքի...

Ստեփանակերտ
 1926 թ.

ԽԱՌՆ ՅԵՐԳԵՐ

* * *

Անիծվիս դու մարդ,
վոր հազար դարեր դեռ բարե ես զալիս
յերկրի զորք, հնիկա զանգվածի վրա,
վոր հազար դարեր խնդում ես, յալիս,
ձձելով ամիսաղ ժաման բույնը նրա... .

Անիծվիս անվերջ,
վոր հազար դարեր հազար յերկունիքով
հազար մատուց ես ծննիլ, ալիւրեզ,
վոր հազար արտեր կատաղի կրեու
լցրել ես, չարդել, լացրել, ծիծաղել... .

Անիծվիս դու մարդ,
վոր յերջանկության շբնաղ վարկյանին
դու կուռք ես դարձել բու աւրեն ու նոզին
յեվ բու սրբազն կուռների առաջ
միւս ծոննի ես չոքել անլաց, անհառաջ... .

Անիծվիս անվերջ,
վոր հազար անզամ նոր-նոր կուռքերով,
նոր-նոր կրերով փոխել ես ուղիղ
յեկ հազար անզամ դու ծոննի չսմելով
բու կուռքի առաջ—փարել ես նրան... .

Անիծվիս դու մարդ... .

**

Անիկիս դու հա՞ց,
 վոր դարեր ի վեր մեծ տարածության
 հսկա ողակում տնօքոր աշխարհն է
 վորպես գալարուն սողութը ճահճի
 սովորիդ առաջ հավես բավարպում...

Անիծիս անվե՛րջ,
 վոր ենք կյաներ յերազ և չբնուղ,
 առանց ենք ասկայն՝ տանջանե՛, տառապանի...
 Ուր կոս կրերն են բարանում, մեռնում,
 բայց ուր վոր չկաս—մասն և, կործանում...

Անիծիս դու հաց,
 վոր դարեր ի վեր անենիզ կարուղ
 թօվառ, տովալուկ անրիկ խեղների
 բնդրեմ բռնության ապստամբության
 հաջ առաջնորդն եր ամհաղը, անկործանի...

Անիծիս անվե՛րջ,
 վոր դարեր ի վեր ենցնուվ կաշառված
 պարտվողն է չոնել հաղթողի առաջ,—
 անեծից հետ ենցնով հղիացած
 նա աղոքել է դահճին վողորմած...

Անիծիս դու հա՞ց,
 վոր ստրկության ժամանակ ըրաներով
 կապել ես մարդուն իր նման մարդուց,
 վոր անզուսպ կրի հաղը բռնկումով
 զատել են մարդուն իր նման մարդուց...

Անիծիս անվե՛րջ...

* * *

Վարդակարմիր յերազներս սիրազարդ
զերք ամպերի դժգույն բողը չբացան,
տապ արելի այրիշ տողն ինձ դիպավ,
իմ վառ սիրո անուրջները մահացան...

Կյանքն իր անվերջ աղմուկներով հոգեսպան
յերազավեր ու ինդմներով արթնացավ
ու ծննդալվեց յեկ փոքրուկից աննուն ծովն արյունի
մեր սրտերում, վոյզ աօխարհում անխնա...

Հուշ
1915 թ.

* * *

Յես հավատում եմ կզա մի նոր ժամ
նոր որ նոր կյանքի տեսչերով առաջ.
նոր սարսափների, նոր ապրումների
յերգ կինչե ուժեղ ու անպարս...

Այդ նոր արեվի նոր արշալույսին
կիսունեմ կրկին խավարը նորու
կրնկնեմ ծնկաշոք նոր ծնվող կյանքի
կուռքների առաջ յես աղորելու...

Մոռալ անցյալի արևոս վարդերից
կկապիմ փունջը—նիւասակի ամելի,
անողութ մարտի... նոր աստվածների
տանարում կայրեմ յես այն, բաղ մեն նի...

Թող ըսպիանա, աննետ կործանվի
անցյալը դժոխվ յերազն արյունի,
նոր սիրո խոսքը բաղ լսվե նորից,
նոր սիրո յերգը բաղ կախարդե ինձ...
Յես ձեզ ասում եմ, կզա մի նոր ժամ,
նոր որ նոր կյանքի տեսչերով առաջ
նոր սարսափների, նոր ապրումների
յերգ կինչե ուժեղ ու անպարս...

ԴԵՆ ՏԱՐ ԱՅԴ ՀԱՑԸ

Դեն տար այդ հացը,
այդ սև շաղախն արյուն-արցունքի,
սոսնջանքի թույնն ե կաթում նրանից
ո՛, այդ շաղախում հազար վորբերի
անհծքն ես բերել ժպիտով դու ինձ, —
անեծք քո հացին...

Միթե չգիտես հազար կյանքերի,
հազար սրտերի դահիճն անպարտ,
պատճառը լացի, վշտի, պայքարի
այդ սև շաղախն ե, այդ թույնն ե հզոր...
Դեն տար այդ հացը...

Պատուհանիս տակ, վորպես ծարավից
տանջվող շների մի հսկա վոհմակ,
ամբոխն ե անցնում հալածված քաղցից,
պատրաստ դոհելու՝ յեղբորն իր հացին...

Տես, այնահեղ նրանք
կատապի կրքով կրծում են իրար,
պարարտամարմին ուժեղն ե բազմել
թույլի շլինքին. հզորն անզորի
արյունն ե ծծում անհագ, անարգել...

Ո՛, տես, փողոցում
պնձված ամբոխն անմեղ վորբերի
խիտ շարքերի մեջ արբած ապագա
լաբրշ վայելքի սև յերազներով
ճգնում ե խեխտել ճիչը մեռնողի..

Շպրտիր նրանց,
գեթ փրկիր մեկին, ԶԵ յես անզոր եմ
ծծել ամենի թույնը տանջանքի...
Շպրտիր նրանց... Ա՛խ, թող, վոր կորչեն
մարդ-գաղանների շարքերը տիմար...
Դեն տար այդ հացը,

այդ սև շաղախն արյուն արցոնքի
սոսնջանքի, թույնն ե կաթում նրանից
միթե չգիտես, հազար վորբերի
անհծքն ես բերել ժպիտով դու ինձ...
Դեն տար քո հացը...

Հիտան քաղաքը թաղված մեջի մեջ
յեռում և տեսդու աշխույժով անմեռ.
Հքեղ կառքերն անցնում են անվերջ
ձիերն աշխույժով գոփում են փայտած
փողոց՝ պայծառ...
Անցնում են զույգ-զույգ, խմբով ու մենակ-
և լաց, և ծիծաղ, վիշտ, յերջանկություն,
խառնվել են իրար. կրքի, ցնծության,
զսպած արցունքի և հեկեկանքի
ժխորն և հսկա...
Գետն արծաթի ժապավիճն և գեղ,—
հսկա ժխորով բեռնված ու հոգնած
շքեղ կամուրջը ճոճվում և կասես...
Մեգի մեջ պայծառ լույսերն են դողում
վառ լավտերների...
Ել չեմ ափսոսում, վոր ապրել յեմ յես,
շտապ անցնում են առույգ ու գլարթ,
շիկահեր կանայք, կրքոտ ժպիտով
հայացքս շոյում... Շքեղ և կյանքս
յերազից ել պերճ:
Ելեքտրաքարշի գեղ ոթյակներում
հարուսան ու աղքատ, ծերն ու պատանին,
թույլն ու ուժեղը, և գեղեցիկը,
և այլանդակը ձուլվել են, կասես,
դարձել մի մարմին...
Շքեղ և կյանքս այս մեծ քաղաքի,
շքեղ և յերգն այս մեծ ժխորի.
յես բաղկատարած յելնում եմ ահա
այդ մեծ ժխորին ձուլվելու համար,
ապրելու համար:

ՅԵՐԿՐԻՆ

Յերկիր, սիրում եմ կյանքդ հնամաշ,
 քո գիշերների խոհերը յերկչոտ,
 արշալույսներիդ շողերը մատղաշ,
 քո բայն ծովերի յերզը փոթորկոտ,
 Գեղազարդ գարնան քնքույշ վարդերից
 պսակն եմ հյուսնել իմ մատադ կյանքի,—
 արբել եմ սիրուց, արբել եմ բռւյրից
 ել ինձ ոտար և թռւյնը տանջանքի...
 Յերկնի լազուքն անհուն, հյասքանչ,
 դոսող անհայտը, անհասն անմեռ
 զոհում իմ սրտանց քո ակնթարթին
 քեզ, քեզ և սիրում իմ ջանել հոգին:
 Լեռներիդ բուքը, քո անտառների
 սոսափը շքեղ... Յեղ քո ծնունդը
 և քո վախճանն անսկիզմ, անհայտ,
 և կիրք, և տանջանք, վիշտ, յերջանկություն
 և հաղթ ծովերիդ մըրթիկներն անլուռ,
 անապատներիդ կյանքը մահաթույն,
 գիշերդ լալկան, խավարդ տիսուր,
 ցասումդ անկեղծ.—իմ մեջ են ապրում...
 Սիրում եմ բախտադ մերթ սև ու թռւնոտ,
 մերթ մոայը անհույս և մերթ մոլտերես,—
 ինձ հետ ծնվեցիր, ինձ հետ պիտ մեսնես.
 քո կյանքն եմ սիրում, կյանքդ փոթորկոտ...

* * *

Փոթորիկների ազմուկն իմ հոգում
 յես անփույթ կանգնած մահվան դիմ դժխեմ
 իմ շիրմի յեպրին նոր կյանք եմ կռում,
 նոր կյանք ավետում տառապող յերկրին:
 Յեվ ջահել կյանքիս հույզերը փնջած
 նվեր եմ բերում մահածին կյանքին
 և անվախ սրտով յես բազկատարած
 յելնում եմ ահա դեմք վորթորկին...
 Թող արյունոտվեն իմ վարդ հույսերը
 այս անհավասար, անեղ ճակոտում
 յեվ թող վոր մարեն վերջին լույսերո
 իմ ապրումնիրի անծայը ճամբեքում...
 Փույթ չե, տես, ահա կգա արշալույս
 կստեղծվի կյանքը մահով դարբնված,
 իմ անշուք շիրմի խորշը մշտահույս
 կավիտե մարդկանց յերկիրը փրկված...

Եռլի
1937 թ.

* * *

Ամրան անսամպ, սլարդ գիշեր և՝ պարդ ու թովիչ վոսկեշող, —
սիրտս, սիրտս մութ զիշեր և և անհույս և և անշող...
Տիյեզերքը մի հեքյաթ և, նուրբ ու շքեղ մի յերազ...
Կյանքս, կյանքս գամբարանն և յերազներիս... Սև կոշմար...

Վողջ յերկինքը մի քրքիջ և բռնավորի խնդումի,
ինքս, ինքս լոկ արցունքն եմ ստրուկների, խեղճերի...
Վառ աստղերը լապտերներն են յերջանկալի սրտերի, —
յերգա, յերգա լոկ տրտունջն և կեղեքվածի, թշվասի...

Արեկելքը հրդեհվում և, արշալույս և արնավառ, —
Կյանքս անայգ սև զիշեր և՝ միշտ աներազ ու խավար:
Արեկելքը հրդեհվում և, արշալույսն և նոր կյանքի, —
Կյանքս, կյանքս մի զիակ և, լոկ հնամաշ ցնցուի... .

Ամրան անսամպ, սլարդ գիշեր և՝ շքեղ, գյութիչ, վոսկեշող...
Սիրտս, սիրտս մութ զիշեր և միշտ մահաթույն և անշող, —
վողջ աշխարհը մի քրքիջ և բռնավորի հաղթության,
ինքս, ինքս անզոր ճիշն եմ ստրուկների պարտության...

* * *

*Տեսել Ես արդյոք քաղցից յերկարած,
վոսկրոտ մատներով ինչպես և աղբը
անվերջ քրքրում ու կեր վորոնում
նա, վորի հայրը հիվանդ, վշաահար
մտնվան մրուրն և անկողնում քածում...*

*Տեսել ես արդյոք փոքրիկ ճակատը
կնճռոտ ու դալրուկ, հայացքը դժգույն
մշուշի նման... Ինչպես և ցնծում,
յերբ հանդիպում ես նրան փողոցում...
Տեսել ես արդյոք փոքրիկ, գազրահեր
զլուխը ծռած սալահատակին
ցնցոտիներում քնքույշ աղջիկը
ինչպես և կրծում արցունքով թրջված,
սի փշրանքներն իր մուրած հացի...
Դու պաշտպանվածդ և վողորմածդ
սովոր ես արդյոք լալ հացի համար..*

*

*Տեսել ես արդյոք, ինչպես նա յերկչստ
իր ձեռքն և պարզում ամեն անցնողի,
նայում փափկասուն կանանց ու մարդկանց,
մեռնողի ժպանվ վողջունում նրանց..
Դու հագեցածդ և վողորմածդ
կարմդ ես ժպատալ քո հացի համար:*

*

*Տեսել Ես արդյոք մութ փողոցներում,
ինչպես և մայրը կյանքից հղփացած
թափշի մեջ կորած աերերից յերկը
յուր վորդու հացը մուրալու համար
ցավոտ ու վշտոտ մարմինը ծախում..
Ինչպես ոքարեզութ մարդիկ հրճվանքով*

տոնում են փողով մարմինը ինդ մոր...
Ե՞ր, գու, առնողդ և վողորմածդ
ծախվել ես արդյոք քո հացի համար...

*

Տեսէլ Ես արդյոք ճշմարտի համար
մղված պայքարում այն հաղթահարված,
սանձված առյուծի խաղաղ քայլերով
խեղճ, շրջայակապ բանտարկյալների
շարանը տրտում լուս ընթանալիս
գեղի կախաղան .. նշավակության
ու կառքերի մեջ կացնով, պարանով
զինված, կարմրազգեստ, բիրտ դահիճներին...
Արդարադատդ և վողորմածդ
դատվել ես արդյոք ճշմարտի համար:

*

Տեսէլ ես արդյոք տաք արճիճների
լափող կարկուտից ընկնող շարքերը
յերեկ դեռ ապրող, զգացող մարդկանց...
Լսէլ Ես արդյոք բյուր անհոգ մարդկանց
արրած, գինովի հաղթ ծափերի մեջ,
յերաժշտության և թմբուկների
գոռում գոչումի անձեռ ժխորում
լսվող հառաչը և մեռնողների
և կյանքից անվերջ հալածվածների:
Ո՛, հալածողդ և վողորմածդ
հալածէլ ես գեթ ճշմարտի համար:

*

Խարճւյկ ե, խարճւյկ...Նոր յուղ ես ցանում
հրդեհիս վրա...Կաց և սուասիր...
Հրդեհաշեղդ, հրդեհամիզդ
կույր ես, չես տեսնում, այդ ինքդ ես այրվում...

ՅԵՍ ՅԵՎ ԴՈՒ

**Ուժեղ սիզարի մուգ կապույտ ծուխն և
լուսամիոփի պես զրկած քո լամպան
դողում սենյակում...**

**Յեղ արծաթաձայն նվազարանիդ
այդ ցեզվակները քո մատների տակ
անհույս սիրողի հոգին հրգեհող
մառորումների քառսն են յերգում...
Մերթ վլրոտի պես և մերթ ել քնքույշ
գեիյուռի նման, լեռան լանջերը
քերող մըրկի կայծակների պես
և մերթ վարդերի բուրմունքի նման
սոնատն եմ լսում քո ջահել սրտի...
Տխուր մեներգն անուրջների մեջ
խամբող, վշտառատ, յերազող մարդու...**

*

**Բայց... զու լսմամ ես գետնի տակ փռված
խողովակներում սահող ջրերի
յերգերը խրոխա.**

**զյութիչ համերգը անթիվ ձեռների
կուս հարգածներից խուլ հեկեկանքով
փափկող յերկաթի, տխուր քայլերդը
առաստաղներից կախված, շառաչող
պտուտակների և գվարթ կանչը
յեսուն կաթսայի շնչափողի մեջ
սուրող շչակի... Լսմամ ես, ինչպես
մենող առյօնի շքեղ ոռնոցով
յերկաթն եթշում, կամ ինչպես ծովում
փոթորիկները միշտ հաղթահարող
թնդանոթների բոսմբյունն ե լսվում...**

*

Յերզդ յերաղ և, իմ յերզը՝ վառ կյանք
յերաղից շքեղ, անուրջից ել պերճ.

քո միտքը հուզող

տանջանքը, գիտեմ, լոկ պատահական
մի ջանել կնոջ շուրթերին սահող
ժպիտն և միայն, կամ թույլ հպումը
կրքից գողացող ճերմակ ձեռների...

Իմ վիշտն այլ ե... Ամբողջ մարդկության
տանջանքը նյութող դժողքն և զազիր,

վորի քուրայում

իմ, քո, բոլորի նոր կյանքն եմ նյութում
քո յերզը կյանքի լոկ ակնթարթն և
անսահմանության շուրթերից ծորած,
իմ յերգն ինքն անմեռ պայքարն և
հավերժության չափ անմահ ու անանց...
Դու հեղ յերգիչն ես իւավարների մեջ
զեղերող մարզու, իսկ յես համարձակ
մարտիկն իմ նրա բախտի և կյանքի:

*

Ուժեղ սիդարի մուկ կապույտ ծուխն և
լուսամփոփի պես գրկած քո լամպան
գողում սենյակում...

Դու դեռ լալիս ես անօրատասխան
հարցերիդ համար, իսկ յես իմ ճամբին
քեզ պես շատերին թողած թիկունքում
բաղդակիցներիս կուռ շարքերի հետ
խրոխտ յերգերիս տարափով հուժկու
առաջ իմ անցնում: Թու սիրած կնոջ
համբույրից ել վառ, արշալույսների
անմեռ կարոտն և իմ միտքը հուզում,
քեզ պես ինքնակամ մեռնողների մեջ
ծնվող նոր կյանքով ազրել իմ ուղում...

ԾՐԱՄՈԼԻԿԸ

Մի յերազկոտ թիմը և իջել քաղաքին
 հիմա արբած շրջմոլիկ և նա անքուն.
 վողջը, կասես, սպասում և արեին,—
 նա յե միայն, վոր պիտ մնա մթնելուն:
 Վոր թեաթափ արծիվի պես խորթ ու ոտար քաղաքում,
 յերերալով նորեն դառնա փողոցներից գինետուն
 հրավառե բասորները պղնձացած իր գանգի,
 նորեն դառնա փողոցները,—շրջե խելաս ու անտուն...
 Վող աշխարհն արբած զանգ և, վոր հիմի
 պղնձացած իր գանգի մեջ զրնգում և, աղմկում...
 Ո՞վ եր խզեց վերջին թելերը մտքի,
 վոր անպատճառ՝ գինետնից նորեն դառնա գինետուն...
 Մի յերազկոտ թիմը և իջել քաղաքին,
 հիմա արբած շրջմոլիկ և նա անքուն,
 վողջը, կասես, սպասում և արեին,—
 նա յե միայն, վոր կոպասե մթնելուն:

Առինում
 1925 թ.

* * *

Դուք, յերազների բնաբառը թեկրին փարված սրտառուչ ծերուկ-պատանի փոք անրջանքի գեղ անելացման հաշիշն ևս քամել ամբողջ եյությամբ հոդեթով յերդի բնդվվամերով տարտարոսառաւատ աշխարհն աղմէկել,
իդուր ևս այդպես իմ անդունդներից հոդատարությունը ինձ քեզ մոտ կանչել...
Ի՞նչ պիտի յերգեմ գիտության, տաղանդը գործարանի, բանվարի, թէ՛ գալանա յերգեր.
բիրս և իմ հոգին, կաչած իր հացին, նա յերբեք, յերբեք քեզ չե համելու
մարդկային կյանքի գժուխը սահճող ըորբունած հացի սոսկ կարիքից վեր...
թեաթափ արծվի խեղճ ցատկութեաբով նու յերբեք, յերբեք ևլ չի բարձրանատ...
Ո՞գ և քեցնից գատ կարիքն ապրում իմ չորինած, չերգած յերգերիս,
կամ ոգ և տենչում գաղտնիքը սուղին անկարող ձայնի իմ ապրութեաբի...
Ցավից գաղագած մարգկությանն այսոր մեղքանաւշ, հնչեղ յերդ չե հարկավոր,
նա հուր և տենչում, պատրայդ՝ այդ հիմն ամրող աշխարհն վասելու համար
նու մուրճ և տենչում ի կոմք այդ մուրճին, վոր կյանք կառուցն մոխիքների մեջ.
շինարարության մի մեխօք խզաւի յերգաաարախից նոր և այսոր,
կասոցիով պատի քարերն անմուռնչ ի պերճախոս ևն և շքեղ յերգից...
Ո՞ւ, զու աշխարհից անգութ ևս ծերուկ, վոր վեհ հույզերի յերգերով արքած,
իր տանջանքերի վախճանը նյութող մարգուն գետ ուար յերգերն ևս տենչում...
Անգութ ևս ծերուկ, վոր քարձունքերից լույս գդիակների շենքաշարքերով
սակեր ևս ձգում իմ հյուզի վրա, ոգում ևս խիստուկ ինձ իմ խավարում...
Թող իմ խճիթբառ-Այսաեղ մուրճերը պիտի համերգեն, վոր գործի անցնեն,
շիկացած, ձորիմած յերկաթներն այսաեղ, գորորցին, շոգին պիտի խմբերգեն,
թնգանօթները պիտի գորտան վերջին գորտուը մեր գործամարտի
յեզ հաղթանակի ալ գրոշներով ամրող աշխարհն զարգարված մի ոք
յերկրի կենարոնամ, իմ այս ձխամած, անշաք ու դաժան, անձուկ խճիթում,
վոր հիմք պիտի գանձա յերկրազգիսկի—համաշխարհային միատինգ պիտ սարգե...
Մարդկությունը վողջ մի աններգաշնակ, յերկրային, շքեղ հուժկու և անպարտ,
վոնց կյանքը մարգու, բազմատենչ հոկա այլ յերգ պիտ յերգե այսաեղ, ամեն տեղու...
Յեզ այդ յերդի հետ պիտ կորչն անհետ և քաղց, և կարիք, և զրկանք, և վիշտ...
Յեզ քո տենչանքին այնքան հարազատ յերգը պիտ հնչե պոետ-ամբոխի,
իսկ յետ ծերացած, թող վոր իմ հացի կարսաը մարտած, գեթ քո հրճանքով
մնջեմ, բարանամ հաղթական ու վեհ պոետ-ամբոխի հորձանքի տառջ...
Ո՞ւ, զիտցիր ծերուկ, մինչ գալն այդ որվան իմ յերզը յերբեք քեզ չեմ յերգելու...

* * *

Կասեք, նորից ապրում են դեռ
 զերեզմանված իմ մտքերի ուղիները ցան ու ցիր.
 կասեք, ելի հնչում են դեռ
 մարտնչումի ու խոյանքի իմ յերգերն ար, կարմիր...
 Ու, կասեք թե, ձեր շարքերում,
 մտքի, կամքի ու պայքարի իմ յերեկվա ընկերներ,
 նորից ապրած կյանքս եմ ապրում
 ու ներբողում կախվը հաղթ գործարանվող մեր յերկրի:
 կասեք թե, ձեզ մատիկ իմ դեռ
 թեև գժկամ խորթացել եմ ծովածավալ պայքարին
 կասեք թե... են... նորյնը չեն դեռ
 թե իմ ճամբան, թե բանդիտի, վոճրագործի սև ուղին...
 Յեվ յերը գանգուր խողովներով
 ծաղկոմներն են գրոշազարդ, անցնում ուրախ ու գվարթ,
 կասեք, ելի մենք նույն ուղով
 թե յես, թե դուք ընթանում ենք միշտ հարազատ, անխռով...
 Բայց նշագվակ պարսագանքի
 թույնն ե յեսում այժմ նկուն իմ վշտալի յերգերում
 ու յիս գիտեմ, վոր ձերը չիմ,
 թեև ձեզնից ընդմիշտ մոտիկ, այժմ շատ մոտ եմ ապրում...
 Յեվ տենչում եմ ինչպես յերեկ,
 յերպիոր անպարտ ձեր կյանքովն եմ յես լիաթոք գեռ ապրել
 հայ, թե տաճիկ ծաղկոմների
 յերգերն անբիծ, յեղբայրական, հոգեզգարթ ու խաղաղ:
 Յեվ չգիտեմ ապրում եմ դեռ
 այս կենսուրախ ու կենսատենչ, բազմալեզու ժխորում,
 թե սոսկ ցնդած յերազ եմ, վոր
 զես պիտ մնամ իրրե լոկ հուշ անձիրազարձ որերիս...
 Դիտեմ միայն, վոր սիրում եմ
 շագրերը կուռ այսոր ապրող ու մարտնչող ընկերներիս
 և տենչում եմ ծնունդը հաղթ
 յերեզմանված և ցան ու ցիր յերեկ ապրում մտքերիս...
 Վորպիս անհանգը բարձունքներից
 խենթ վոստյունով գաճավիժած մի շիկացած ողաքար
 ճշում եմ յես, լսեցիք ինձ,
 —Զեր նոր կյանքի հրաբորոք այսն եմ տոնում կենտրախ...

ՀՐԱԺԵՇՏ

Ճանապարհների այս նեղ հանգույցում
անջատման վերջին ժամերն ենք ապրում...
ու այս ամենը յերազ և թվում,—
ուրիշի յերգած մի յերգ անհատնում...
Յեզ կա, և չկա... Ամեն ինչ հիմա
պառյա ե, քամի, բուրմոնք ե, նիրճ ե,
թիմը ե, վոր թեն թնդում ե ահա,
ափսոսանք ե ու կսկիծ միայն:
Վերջին փոշին ել ավտոշիների
կհեսա վաղը քո ճանապարհին...
Զրույց կդառնաս այս մեր քաղաքում,—
քո ընկերների կարմիր շարքերում...
Դեմդ կժպտա արել յերկը, —
կարմիր արել կարմիր քաղաքի, —
ուրիշ յերգած յերգերն անհատնում
ել չեն աղմկի քո կյանքի ուղին:
Յերջանիկ ես դու... Այդ յես չգիտեմ...
Գիտեմ, վոր նորից, յեթե զառնայիր
ճանապարհների ել նեղ հանգույցում
հարազատ յերգով քեզ վողջունելու
կելներ իմ հոգին...
Իսկ այժմ, այժմ ինձ անհարազատ
ուրիշի յերգն ե ճշում քո հետքից.
«Դու գնաս բարով, ընկեր Արմենակ»...
Բայց կա անջատում, վոր հանդիպումի
վոսկեվարս հույսի լույսով և հղի. —
ինչ մեր վերջինն ե վարկյանն առաջին
կդառնա վաղն ուրիշի համար...
Յերնեկ ուրիշին:
Իսկ մենք...
Ճանապարհների խխտ նեղ հանգույցում
անջատման վերջին ժամերն ենք ապրում
ու այս ամենը յերազ և թվում,—
ուրիշի յերգած մի յերգ անհատնում...
»

* *

Հիմա մեր յերկրի մանուկն ել հոկտեմբերիկ ե,
պատանին՝ պիոներ ու կոմյերիտ,—

հիմա բոլորն ել կամ կոմմունիստ են,

կամ ազագա կոմմունիստ...

Նոր կյանքի կառուցող բանակում

հիմա մեր յերկրի ծաղկութն ել մարտիկ ե

կոմյերիտը՝ վաշտկոմ ե, գնդապետ քաջարի...

Ամեն տեղ մի կամք ե, նույն կամքն ե

բյուբերի Կարմիրի...

Հիմա մեր յերկրի մանուկն ել հոկտեմբերիկ ե,

պատանին՝ պիոներ ու կոմյերիտ...

Միրտ իմ, դու յել ես կառչել այս յերկրին


իմ կյանքի դանդաղած վազքի մեջ

նորեն ես գեռ ուզում լինել սոսկ կոմյերիտ...

1928 թ.

Ստեփանակերտ

ԱՐԵՐԳՆԵՐ



ՆՐԱ ՀԻՇԱՏԱԿԱՄԱՏՅԱՆՈՒՄ

Թողնում եմ սիրս այս զունաս բղրի
անկառող ձայնի խուլ տողերի տակ.
բողնում եմ վիշս բն հպարտ սրտի
խորունկ ծալքերում վարպես նիւատակ...
Այս, անգին, ճիշդր, վոր ապրել եմ յիս
տանջալից կյանքի գոս նիրաններում,—
ճիշդր իմ անգին, վոր սրբել եմ մեզ
իմ վիատ հոգու անհույս յերգերում...
Թողնում եմ սիրս այս զունաս բղրի
անկառող ձայնի մեջ տողերի տակ.
բողնում եմ վիշս բն հպարտ սրտի
խորունկ ծալքերում, — արևոտ նիւատակ...

1912 թ.
Շուշի

* *

Աւճանային մառախչապատ
ու միզամած զիւերին
են հեզ, դալուկ, լուսնից զունաւ
ու ժիրամած հեզ նակտին,—
նազանեներով լուռ սահում են
անուշներն իմ կյանքի...

Լուռըյան մեջ, մենուրյան մեջ
սառապում են բողին,
հելիքդ բոնած դու լուռմ ես
դադրած որտիդ խուլ զարկին...

Յեզ ցավագին ու դառնագին
նեծկլտում ես ու լալիս,
խավարի մեջ, մենուրյան մեջ
սառ սպում ե իմ նողին,—
նելիս բոնած յես լուռմ եմ
ժխուր, սանօփած ես լացին...

* * *

Նեմաստվեր անտառներում լուռ, մենակ,
ականակիս աղբյուրի բով յերազուն.
մատադառունկ բվերի մոտ յս կրկին՝
նեղ եմ կանչում, վերադարձիր իմ անգին:

Մանրարախիծ զելիյուռն անա մահաժիպ
խաբեպատիր յերգ և ճյուսում սիրասյուք,
սիրս կարս բաղցրահամբույց բա կանչին
նեղ և տենչում, վերադարձիր իմ անգին:

Սիրանանանչ ատղերն անա նրացայ
լուռ պատմում են զեղեցկանյուս նեխաքները բա կյանքի.
բաղցրանվագ յերգով արբած իմ հոգին
նեղ և կանչում, վերադարձի՛ր իմ անգին...

1913 թ.

Շահ

* *

Յես գիտեմ, մի որ կազս ինձ այցի
 ու կտարածվես իմ շիրմի վրա.
 դառն արցումներով կցողիս բարք
 իմ հողակույսի, կարտասվես անվերջ
 մոռած հույզերի, վարդ յերազների
 հուսերով առատ կյանքի կրուն
 գերեզմանիս մոտ յիշ վերջապույտց
 մինչեւ առավոտ կուրծեդի կճնեն
 վետերի ըլրան... Բայց յես չեմ ուզում,
 վոր մանխիքար իմ մահի վողբաս.
 մոռացիր դու ինձ, մոռացիր անզին...
 Յես գիտեմ մի որ մահերզը կերգես
 անցած ուերի... Իմ հողակույսի
 մոտ հասած ՏՏՏՈՄ կաղոքես լացով.
 բայց իզո՞ւր, իզուր աղօթեն ու լացը
 կյանք չեն ներենչի իմ վասկուներին
 ա՛, մոռացիր ինձ, մոռացիր անզին...
 Յես գիտեմ մի որ կկորչեն անինք
 առձան, հողակույս յիշ սեվ հիշատակ...
 Կյանքը կինուսէ վետերի ըլրան.
 նորից կրնդիանե, նորից կոկսե,
 նոր հողակույսը նինը կիֆին...
 Ա՛խ, յես չեմ ուզում, վոր դու լաս մի որ,
 մոռացիր դու ինձ, մոռացիր անզին...
 Ո՛, գիտեմ դու յիշ կպառկես մի որ
 մի այլ աւշարհի, ցուրտ նողի գրկում.
 իմ գերեզմանն ել կմնա անտեր
 վայրի կանաչով ծածկիած դաշտի մեջ,
 ա՛խ, յես չեմ ուզում, վոր մահապարտը
 յուր սեվ ուերի ապրե վողբալով,—

մոռացիր դու ինձ, մոռացիր անգին...
 Յես զիտեմ կյանքը կանցնե նոր օրջան,
 մեր գերեզմանը կհերկեն մարդիկ,
 վոչ վոյ չի սարսի, վոր մեր վուկորը
 ջարդվում է խոփից, բլունգից, բանից...
 Վոյ վոյ չի նիշի, վոր ապրել եմ յես,
 վոչ վոյ չի նիշի, վոր ապրել ես դու...
 Մոռացիր դու ինձ, մոռացիր անգին...

1915 թ.

Ստարիցա

* *

Յես անապատն եմ ամայի, ավեր,
իմ եյությունն ավազն և անկյան.

դու շեղ գարնան ծաղիկ ես փարքամ.
իմ ավազներում կայրիս, կրունիս,

անցի՛ր, հեռացի՛ր...

Յես փորսորիկն եմ հայատ սարերի
յեկ իմ համբուլյըր՝ կայձակն և այրող.
դու՝ բնեույց զեխյուռ՝ անչար, սիրառուն
յես նեզ կիսեխտեմ իմ կատղած ընչոլ
անցի՛ր, մոռացի՛ր...

Իմ յերգը խորշակ՝ անապատների
ավազը հուզող, իմ յերգը փորս՝
անանց լեռների լանջերը ժերող,
բո յերգը կյանքի յերգն ե միալար...
Անցի՛ր, հեռացի՛ր...

Իմ յերգը ցաւկոս հրաբխած լեռան
ծխասյունների փլփածքն և անեղ,
բո յերգը մնջած, դալիկացած ամսան
բնեույց մահներգն ե արցունենոս ու նեզ,
անցի՛ր, մոռացի՛ր...

Իմ յերգը տիկնած մետաղի հալոց,
զործարանների՝ նելիքն և փորուկոս.
բո յերգը մահիվան տագնապի տիցոց—
անզոր աղօրի մրւունչն ե յերկոս,
անցի՛ր, հեռացի՛ր...

Յես, դու համիլսյան ոսար ենի իւսուր,
յես՝ անեղ փորս, դու՝ շեղ յերազ,
ինձ հավասարել յերթեց շես կարող...
Յես՝ անհաւ կոխի, դու՝ միշտ հաւսուրին,
անցի՛ր, մոռացի՛ր...

* *

Այստեղ շիրիմ եւ

Դուք ձեր սիդաճիմ փոքրիկ վոտներով,
վոր զարդարել եք ժապավհններով
այստեղի հողը չկոխեք յերբեք.
այս ձեր պատճառով մեռած սրտերն են,
վոր հող են դարձել...
ՏԵս, այն մեկը... ԽԵՂԾ մանուկ՝ եր դարուկ,
կնճոտ հայացքով հիգանդ, սովալլուկ.
ձեր պալատների զոնհրի առաջ
զարդերում կորած ձեր շան պատառն եր
հրճվանքով կրծում...
Միժւսը... փոքրիկ աղջիկ եր գունատ.
յերեր քայլերով, դողդոջ մատներով
ձեր ախաղակույտում մինչև յերեկո
կեր եր վորոնում... Զեր ծառան նրան
փողոց եր նետում...
Այն մեկը... Գիտե՞ք... Նա ձեր պալատի
բարձր տանիքից անզգույշ քայլի
մահվան վոստույնով սալահատակին
փոված բանվորի մայրն ե սդավոր,
վոր մեռավ ցավից...
Այս մեկը... Հարուստ, կրքոտ պատանու
դրկախառնության բիրտ վայելքների
զոհն ե... Մի աղջիկ... Այն յուր զավակն ե,
վոր իր մահից հետ՝ անխնամ, անտեր
մեռելի քաղցից...
Սա յել բանվոր եր՝ առույգ պատանի,
վոր յուր սովամահ մորը թողելիս
բազկաթոռի մեջ նիրհող բուրժուային
ուզում եր իսկական... Յերեք որ ճոճվից
սյուներից կախված...

Սրանք ել ձերոնց արնոտ խնջույքի
զոհերն են այստեղ... Ձեր թմրուկների,
գոռում գոչումի ու հաղթ ծափերի
անձի ժխորից արրած, անտրտունջ

մորթվել են այսպես...
Իսկ սրանք... Ձեր դեմ ծառացած մարդկանց
այն կառ շարքերում ձեր զինվորների
գնդանետների մահամփյուռ խաղից
այս դաշտի վրա անկենդան փռված

նահատակներն են...

Այս բուռը հողը մի ջահել սիրա եր
ճեղքված նա յերկար բարախում եր դեռ
և շատրվանում արյուն ու անեծք,
ցողում ժանտ սուրն անհեղ ժանդարմի...

Իսկ այս մոխիրը...

Գործարաններում պայթած կաթսայից
հրդեհված մարդն ե... Սա յել իմ քույրն ե,
լուսազուրկ, խօնավ, փոքրիկ սենյակում
իմ թույլ ձեռքերում սովից տարածված

թոքախտից մհամվ...

Սա յել իմ մայրն ե, իսկ սա յեղայրս...
Իմ լավ հույսերն են, իմ վարդ հույզերն են
ու այստեղ թաղված... Բութ վայելքներից
հավետ ժայռացած, զիտեմ անզօր հը

ինձ հասկանալու...

Դուք նույնիսկ կյանքում դեռչեք արտասմիկ
թեկուղ իննդումի անվիշտ արցունքով.

Դուք ձեզ պարուրող փարթամության մեջ
մի մի դիեր եք անխնդում, անլաց,
անվիշտ, անարցունք...

Թողեք ինձ հանգիստ... Մենակ պիտի վողբամ
անթիվ մահերն իմ սիրած մարդկանց.

Թավշի աշխարհը հեռու յի, հեռու...

Այստեղ վշտացած մայրերը պիտ գան,
ձեր մահը յերկնեն:

Ի՞նչ... Դեռ ուզմամ եք, մալով այստեղ,

Յայն թշվառների արցունքն հլ տեսնել...
Յերգվում եմ ահա այս ընկածների
խամրած հույսերով, ել անկարող եմ
յես ձեզ հանդուրժել...
Անզոր եմ խեղանել փոթորկոտ հեքը
անսամնձ զարույթից ուռչող իմ սրտի,
ձեղ յես կիսեխամբ մըրկու հոգուս
կատաղի շնչով... Դուք այս վայրերով
լուս, միշտ լուս անցեք...
Այստեղ շիրիմ ե. . Այս ձեր զարդերի
գինն ե ահավոր, վոր փոված դաշտում
ձեղ ե անիծում... Այս մեռածների
կարմիր մայիսն ե անլուս արցունքից
ձեր մահը յերկնում...
Դուք ձեր սիգաճիմ, վորքիկ վոտներով,
վոր զարդարել եք ժապավեններով,
այստեղի հողը չկոխեք յերեք. ,
այս ձեր պատճառով մեռած սրտերն են,
վոր հոդ են դարձել...

P. P. P. L. B. N.
1919 P

* * *

Այսոր,

յերք ցանցիր են արդին մաքերս խռնված,
ալմոր գլխիս մեջ,
յերք անվերջ զնդում են, յերեկներն իմ ապրած.
թվում ե, զոր վերջին անգամն եմ քեզ գրում
քույր իմ հեռավոր...

*

Կարդաս մի որ

կյանքիս դամբանի տյս յերգը վերջին.
կզամ, վոր հավետ յեղել եմ քեզ հետ
ու քեզնից լքված իմ կյանքն ել այրող
կարոտն ե յեղել քո հանդիպումի.
սիրոս վիրավոր գամբոի մի նման
հուր սոնատներից դյութիչ ու այրող
իր վերջին յերգը՝ կողկանձն ե ապրում,—
քույր իմ հեռավոր...

*

Անկարող խոսքի մի հրդեհածին

տանջալի փառքի անհույս ձգառումի
մղձավանջն եմ յես,
այդ մղձավանջն ել լոկ մոխրակույտն ե
վառած որերիս...

Հ Ի Մ Ա

Հիմա հազարիննարյուր քսան և հինգ թվականն ե տիկին...
 Յերեք ձիգ տառնյակ տարիներ են դիակնացած իմ ճամբին,
 հիմա յես մահամերձ, սեամաղձ մի ծերունի յեմ տիկին...
 Յերեք ձիգ տառնյակ տարիներիս հաղթանակների թանգարան
 յերեք հարյուր թերթանոց իմ հուշագիր-տեսքակն եմ
 ամենալուր զեհնիս հրերին յես ձոնում...
 ԶԵ, հիմա հազարիննարյուր քսան և հինգ թվականն ե տիկին

*

Հիշնում եք... Ամենից շատ ձեղ եյի սիրում յես՝ տիկին:
 Ո՛, ամենից շատ ձեղ եմ յես յերգել այն ջահել հուսառատ որերին:
 Սեպտեմբեր եր, թե հոկտեմբեր չփատեմ
 դուք գեռ այնպես քնքշաբար՝ ժպտում եյիք ինձ տիկին,
 դուք այնպես քնքշաբար սոսանում եյիք ինձ տիկին...
 Հիշնում եք ծառուղին... Քնքույշ, յերկշուռ ու վայրի
 իմ հայրենիքի յեղնիկն եյիք դուք տիկին...
 Իմ ջահել խանգամառ որերի վառ փերին...
 Վոր դարձաք իմ հոգու զեհնը բորբոքող ժանառ գեր տիկին...

*

Ե՛, հիմա դուք ուրիշի կինն եք տիկին...
 Դուք թողիք մթամած նկուղն ու խոիրներն իմ
 պալատի վորդու հետ ընկերացաք տիկին...
 Դուք ելի մանկաբար հարցնում եք ինձ տիկին,
 թե ինչպես սիրելով յես զարձա ձեր վոխերիմը տիկին...

*

Ո՞վ ասաց, վոր ձեղ չխլեց ինձնից վոսկին.
 Հե, հիմա դուք մելիքի կին եք տիկին...
 Բայց հիմա հազարիննարյուր քսան և հինգ թվականն ե տիկին,
 հիմա պալատները քո մելիքի գերի յեն իմ նկուղին...
 Այսոր հանձնեցի հուշագիրն իմ կրակին.
 Կուզեմ քեզ ու մելիքիղ, պալատներիդ հետ
 մատնել վրեժիս զեհնի բոցերին...
 ԶԵ, հիմա հազարիննարյուր քսան և հինգ թվականն ե տիկին...

ՆՍՏԱՐԱՆԸ

Այրող ու նենզ, նստապնդող հայացքներից մարդկային
 հեռու բուսած բարդիների չնաշխարհիկ ծառուղում
 յերազի պիս անցած, կորած կայանքիս շքեղ որերին
 սպասել եմ, գեղատեսով հրածած կին, քո գալուն,
 Կրծքիդ թափուծ խոպաները քո ջրվեժող մաղերի
 շրջազգեստիդ յերազարեր շշնջյանով կանացի
 ապավինած շղարշներին յերեկոյան մութերի
 յերկշու ու հեղ աղամիսու պիս միշտ կդայիր ինձ այցի...
 Հրապուրող ժակեներով ճառազայթող ու նրբին,
 զեփյուռաշունչ շշուկներով սիրաճաճանչ, յերազուն
 կնատեյիր բարդիների չնաշխարհիկ շուրջազարում,
 նստարանին, վոր ել չկա, նստարանին մոխրացած...
 Վողջ աշխարհը, կասիս, թեթև ողանավ եր մի հակա
 մեր ծառուղին ողաչու յեր, մենք յերկուսով ճամբորդներ,
 վողջ աշխարհը հսկայական մի ծաղկոց եր բուրավետ
 մենք՝ յերկուսով իրար գգված, քնքույշ ու հեղ ծաղիկներ...
 Տիեզերքը արձագանքն եր անվիշտ յերգի, յերկրանքի
 տիեզերքը արձագանքն եր անզուղական մեր կյանքի...
 Կարծում եյինք, վոր պիս անվերջ ապրեն շքեղ ծառուղին,
 նստարանը, սաղարթախիտ, չքնաղագեղ մեր բարդին.
 այդպիս եյինք կարծում մենք միշտ, յերը վոր այնպիս հոգեղմայլ,
 այն վարդաբույր ջրվեժները գեղագանգուր մաղերիդ
 շուշանափայլ գիրք ուսերիդ փռած անփույթ ու անհոգ,—
 սպավինած շղարշներին յերեկոյան մութերի
 յերշկոտ ու հեղ աղամիսու պիս գալիս եյիր ինձ այցի...
 Այժմ, սակայն, հեռու յես գու մոխիրներից իմ կյանքի
 ամենապօր վոսկուն ծախված կինն ես զարձել ուրիշի.
 ու վորբացած այս ծառուղում մեր հետքերով հրդէնված
 ախրասսսափ բարդինու մոտ նստարանն ել չկա...
 Ու կասիս թե վողջ աշխարհը անապատ և անսահման,

ծվիճնների, մոխիրների մի անհղերք ծով հոկտեմբերի ծոցում խելացնոր, աստանդական մի ճամբորդ յետ ել լրված շատերի պես պիտ անտրառունջ մոխրանամ...
 Կամ կատես թե համատարած յեղինջների այս զաշտում տարածության բարձունքներից գահավիժուած ողաքար,
 վորովես միակ հիշատակը գերեզմանված այս զաշտի խրվես պիտի այստեղ հողում, մնամ անչարժ հավիտյան.
 իսկ գու պիտի դիտես հեռվից զղիականերից նրբակերտ,
 պիտի տպրես, ծաղրես միշտ ինձ վորպես վոսկին ցնցոտուն,
 պիտի դիտես, պիտի ծաղրես անտապատն իմ կյանքի
 պիտի տպրես, զոր միշտ ծաղրես խոլ հուշերն իմ տանջանքի...
 Բայց չե, կեցիր, զղիակներդ գերի յեն իմ նկուզին.
 Ընկերական աշխատանքի դյուցազնական պոռթկումով
 փլվածքներում մի նոր քաղաք հակայական պիտ կերտվե,
 անտապատված այս վայըներն ել ծաղկոցների պիտ վոխինն...
 Մոխիրներից պիտի ծնվե և մեր սիրած ծառուզին.
 անտապատված, հակայական, գերեզմանված վայըների
 մոխիրներն ել ոլիտի ծաղկեն, նստարանն ել պիտ տպրե,
 ստկայն այնտեղ, յես հանգչելով իմ ծերության որերին,
 յերբեք, յերբեք բարգինու մոտ չեմ մնալու քո այցին...

1926 թ.
 Առեփանակերտ

ՓՈՂՈՑՈՒՄ

•

Ծաղկափթիթ մեր լեռների բազմաբուրյան մի ծաղիկ
խաղաղանիստ ձիգ փողոցում շուշաներես մի աղջիկ,—
խավարաբորք հողիս այրեց գեղեցկածուփ նայվածքով,
բոսորատիպ սիրսո գարձավ խավարազգեստ մութի ծով .
Հեղահամբույր նուրբ ժպիտով լուսացնցուղ աչքերի
կախարդվել և կյանքի ճամբին հեզ, զեգերող իմ հողին.
վայելչագեղ յելենջը քաղցրանվագ մի յերգի
տրձագանքում ու հուզում և յերկայնաձիգ իմ ուղին...
Ամենասափյուռ մի բուրմունքով գեղեցկագեղ մաղերի
չարանախանձ սիրսո նորից դյութված կասես պիտ ճշա.
նսեմաստվեր մութերի մեջ քաղցրասոստփ ծառերի
լոռությունն և, լոռությունն անեղասաստ մի յերգի...

*Սահմանակերտ
1928 թ.*

Թ Ո Ւ Ր Ք Ո Ւ Հ Լ Ի Ն

Կիսականգուն մեր քաղաքում զործարանի շենքի մեջ
 մի լուսաճեմ ու լուսափյուռ թուրքուհի յի մեղմ յերգում
 գեղազգվարճ, գիրդ ձեռները թաղած քնքույշ թելի մեջ
 գեղանշույլ մի ծիծաղով աշխատում ե ու ժպտում...
 Յեկ մի «ինչժև» անդնդախոր կարոտի պիս սեածաղձ
 եյությունս աղմկում ե հրաբորքոք ցասումով,—
 ինչու և յես շատերի պես մի բանվոր չեմ սրտաբաց,
 վոր միշտ դյութված յես հրճվեյի այս աղջկա ապրումով,
 վոր մեղմընթաց, նուրբ թելերից գեղապաճույճ դազգահի
 կտուցներով բոժոժները քրքրեյի ու տայի,—
 հրաբորք սիրտս մնջեր զվարթարար մեղմ յերգից
 «Յերնեկ...» ասեր զործարանով այսպես մոլոր անցնողն ինձ...

1928 թ.

Ասեփանակերտ

* *

Պողպատն և պողպատում Զեր պողպատ զիլ ձայնում
Ժպտում են ժպտացող Զեր աչքերը, բայց... Ո՞ւմ...
Մարգարտե բույրերի, հույլերի թեժ զինին
պահում եք Դուք Զեր մեջ, ում համար...
Անհամար որերի հերի մեջ
ինձ այդպես, ծաղկի պես ժպտացեք,
ժպտացող լուսնթափ աստղերի ժապավեն իմ հոգում
Զեր աչքերն են, ժպիտներն են հար ապրում...
Մարգարտե բույրերի մշուշոտ անուրջում
խանդավառ կարոտով ապրում ե իմ հոգին,
իմ կյանքի այս լազուր ճամբեքում
ժպտացեք, ժպտացեք ինձ տիկին...

822

1928 թ.
Ստեղծանակերտ



ՅԱՆԿ

եջ

Ընթերցողներին

3

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՅԵՐԳԵՐ

1. Յես ձեզ ասում եմ	7.
2. Գալիս ենք ահա մեր նախնկիների	8.
3. Արշալույսին	9.
4. Թե վոր ինձ նման քաղցած լինեյիք	11.
5. Քաղաքն անցյալում	13.
6. Նոր արշալույսին մեռնող խավարի	17.
7. Ճշմարտությանը հյուսիսային	18.
8. Վոճրապատում	19.
9. Մարդ	21.
10. Մղձավանջ	23.
11. Հինգ	25.
12. Զկար մի հյուզ, վոր չունենար	29.
13. Դժողից հետո	30.
14. Բոլոր նրանց, ովքեր յերեկ	32.
15. Կոմկուսին	34.
16. Մեզրաշուրթ, շոկոլաթ	36.
17. Ընկեր Ա. Ղարագյուղյանին	38.
18. Կարմիր Բանակին	39.
19. Լուսափրփուր յերազներում	40.

ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒՄ

20. Ավերակներում	43.
21. Ամբաստանազիր	45.
22. Այս հնամաշ ճամբի վրա	47.

ԱՌԱՅՅԱՎԱՆԱԳԻ

23. Արդյոք պիտի գաս	51.
---------------------	-----


24.	Անլուռ անեծքի թույնով ծանրացած	.	52.
25.	Շան դնչից ընկած վոսկորն ենք կրծել	.	53.
26.	Ասում են, վոր կաս	.	54.
27.	Ղազանչեցոց յեկեղեցու փլատակներում	.	55.

ԽԱՐՆ ՅԵՐԳԵՐ

28.	Անիծվիս դու մարդ	.	59.
29.	Անիծվիս դու հաց	.	60.
30.	Վարդակարմիք յերադներս	.	61.
31.	Յես հավատում եմ	.	62.
32.	Դեն տար արդ հայը	.	63.
33.	Ք ա դ ա բ ը	.	64.
34.	Յերկրին	.	65.
35.	Փոթորիկների աղմուկն իմ հոգում	.	66.
36.	Ամրան անամպ	.	67.
37.	Տեսել ես արդյոք	.	68.
38.	Յես և դու	.	70.
39.	Շըջմոլիկը	.	72.
40.	Դու, յերագների քնըույշ թևերին	.	73.
41.	Կասեք, նորից ապրում են դես	.	74.
42.	Հրաժեշար	.	75.
43.	Հիմա մեր յերկրի	.	76.


ՍԻՐԵՐԳՆԵՐ


44.	Նրա հիշատակամատյանում	.	79.
45.	Աշնանալին մառախապատ	.	80.
46.	Նսեմաստվեր անտառներում	.	81.
47.	Յես գիտեմ, մի որ	.	82.
48.	Յես անաղտան եմ	.	84.
49.	Այսաեղ շիրիմ ե	.	85.
50.	Այսոր	.	88.
51.	Հիմա	.	89.
52.	Նստարանը	.	90.
53.	Փողոցում	.	92.
54.	Թուղթուհին	.	93.
55.	Պողպատն և պողպատում	.	94.






60 4.







A 66814

